

ԱՅՍ ԹԻՒՆԿ ԿԱՐԴԱԼ՝

ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԴԱՐԱՇՐՅԱՆԸ ...	էջ 2
ԵԿԵՂԵՅԻՆ՝ ՃԵՍՄԱՐԻՏ ԲԱԶԿԵՐԱԿԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԿԱՄԵՆ	էջ 2
ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆԻ ՎԵՐԱԾՈՒՄԱՆ ՏՈՆԸ	էջ 3
ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԿԱՆԵՐ ՈՒՍՏԻ ՕՐ՝ ՊԻԵՏԱՅԱՅԻ ՄԵՋ	էջ 3
ԻՄ ՍԻՐԵԼԻ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԸ	էջ 5
ԻՆՉՊԷՄ ԶԵՆՏԻՍ ԶԱՐԹԻ-ՈՒՆԻԶՄԶ ՍԵՄԱՄՐԱՆԵՐՈՒ ԲՐԻՏԱՆԵՐԷՆԸ...	էջ 6
ՊՈԼՍԱՅՅ ԳՊՐՈՅՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆՆԻ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒ ՄՊԱԳԱՆ...	էջ 7
ԵՐԵՄԻԱ ԶԷՕՍԻՐՃԵԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՒ ԵՐԿԸ	էջ 9
«ԶՈՒՐԱԾՆՈՅ»-ՈՎ ՀԱՌԱԳՈՂ ԼՈՅՍԸ՝ ՍԺԻՒՌԵՐ ԵՐԿՆԵՐ ՏԱԿ	էջ 10

ԵՐԵԻԱՆ ՀԱՏ ԱՆՉԱՆԳԻԱՏ

Հայաստանի Վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ Հայաստան շատ անհանգստացած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ առկայ իրադրութեան հետեւանքով:

«Արմէնփրէս»ի հաղորդումներով՝ Հայաստանի կառավարութեան հերթական նիստէն վերջ Նիկոլ Փաշինեան յայտարարութիւններ ըրաւ զանգուածային լրատուութեան միջոցներուն համար: Լրագրողներու հետ զրուցելու ընթացքին վարչապետը անդրադարձաւ այն դիտարկման, թէ ԱՄՆ-ի նախագահ Տանըլտ Թրամփ կ'արժեւ տնտեսական պատերազմ յայտարարած է Իրանի դէմ: Թէ ի՞նչ ազդեցութիւն կրնայ գործել այս վիճակը Հայաստան-Իրան յարաբերութիւններուն վրայ: Ի պատասխան Նիկոլ Փաշինեան ըսաւ.

«ԱՄՆ-ի եւ Իրանի հետ կապուած իրադրութեամբ, բնականաբար, մենք շատ անհանգստացած ենք»: Վարչապետը աւելցուց, որ այս նիւթին շուրջ Երեւան սերտօրէն կ'աշխատի Ուաշինկթընի եւ Թեհրանի հետ: «Մեր ցանկութիւնն է, որ այս իրադրութիւնը հնարաւորինս շուտ լուծուի», եզրափակեց վարչապետը:



ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՅ ՆԱԽԱԳԱՅ ԱՌԵՆԻՆ

Լիբանանի Հանրապետութեան նախագահ Ժոզեֆ Աուն Պապատայի պալատին մէջ ընդունեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար դոկտ. Նորա Պայրազտարեանը եւ անոր



հետ քննարկեց մարմնակրթական հարցեր, ինչպէս նաեւ նախարարութեան մտադրած ձեռնարկներ, որոնք պիտի կատարուին նախարարաց խորհուրդի որոշումով որդեգրուած «Լիբանանի մէջ մարմնակրթութեան շաքտուան» ծիրին մէջ:

Հանդիպումի ընթացքին նաեւ քննարկուեցաւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան ապագայ գործունեութիւնը:

ԱՐՑԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒՆ ԵՒ ՂԱՅ ՄԻԲ ՂԵՐԻՆԵՐՈՒՆ ՂԵՄ ԱՐՁԱԿՈՒԱԾ ՑՄԱՅ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՃԻՈՆԵՐԸ ԿԸ ՄԱՆ ԱՆՓՈՓՈՆ

Ատրպէյճանական դատարանը անփոփոխ պահեց Արցախի նախկին ղեկավարներուն եւ հայ միւս գերիներուն դէմ արձակուած դատավճիռներն ու բանտարկութեան պատիժները՝ մերժելով անոնց բողոքարկումները եւ ի զօրու թողլով այս տարուան սկիզբը սահմանուած խիստ պատիժները:

Ատրպէյճանական լրասփիւռներուն համաձայն՝ Պաքուի վերաքննիչ դատարանը 6 Օգոստոսին որոշած է անփոփոխ ձգել Պաքուի զինուորական դատարանին կողմէ 5 Փետրուարին արձակուած վճիռները: Արցախի նախկին նախագահ Արայիկ Յարութիւնեանի, նախկին նախագահներ Արկադի Ղուկասեանի եւ Բակո Սահակեանի, Ազգային ժողովի նախագահ Դաւիթ Իշխանեանի, նախկին Արտաքին գործոց նախարար Դաւիթ Բաբայեանի, Պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականեանի եւ հայ միւս բանտարկւածներու ներկայացուցած բողոքարկումները մերժուած են:

Այս որոշումով՝ ի զօրու կը մնան Յարութիւնեանի, Մնացականեանի, Մանուկեանի, Իշխանեանի եւ Բաբայեանի դէմ արձակուած ցմահ բանտարկութեան վճիռները:


Դատարանը նաեւ հաստատած է Ղուկասեանի եւ Սահակեանի 20-ական տարի բանտարկութեան վճիռները: Մաղաթ Բաբայեան եւ Մելիքսեթ Փաշայեան պիտի շարունակեն կրել իրենց 19 տարեան պատիժը, Գարիկ Մարտիրոսեան՝ 18, Դաւիթ

Ալավերդեան եւ Լեւոն Բալայեան՝ 16, իսկ Վասիլի Բեգլարեան, Գուրգէն Ստեփանեան եւ Էրիք Ղազարեան՝ 15 տարի բանտարկութիւնը:



Այս դատավարութիւնները լայնօրէն դատապարտուած են Հայաստանի, միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւններու եւ իրաւական փորձագետներու կողմէ, որոնք լուրջ մտահոգութիւններ յայտնած են պատշաճ դատական գործընթացի, իրաւաբանական ներկայացուցչութեան ապահովման եւ դատավարութիւններու արդարութեան վերաբերեալ: Հայաստան բազմիցս կոչ ըրած է անյապաղ ազատ արձակելու Ատրպէյճանի մէջ տակաւին պահուող բոլոր հայ գերիները:

ՄԱՅՐ ԱԹՈՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԵՐՈՒԹԻՒՆԸ ՀՆՈՐԱՎՈՐԵՅԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՂԱՅՈՑ ՂԱՅՐԱՊԵՏԻՆ ՍՆԴԵԱՆ 75-ԱՄԵԱԿԸ



Օգոստոսի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ծննդեան 75-ամեայ յոբելեանի բերկրալի առիթով այցելեցին քեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտօնավարող եպիսկոպոսները, միաբաններն ու քահանաները, ինչպէս նաեւ Մայր Աթոռի պաշտօնէութիւնը:

Իրենց որդիական սերն ու շնորհատրամբները բերելով Հայոց Հայրապետին՝ ներկաները մաղթեցին կենաց արեւշատութիւն, քաջառողջութիւն եւ արդիւնատու ու անասան հովուապետութիւն՝ ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ի մխիթարութիւն բարեպաշտ ժողովրդի եւ ի զօրացումն Հայրենիքի:

Նորին Սրբութիւնը, իր երախտագիտութիւնը յայտնելով ջերմ խօսքերի ու բարի մաղթանքների համար, ի դէմս ներկաների Հայրապետական իր օրինութիւնն ու գնահատանքը ուղղեց հոգեւոր ծառայութեան մէջ իրեն լծակից եկեղեցականաց դասին ամբողջանուէր ու նախանձախնդիր սպասաւորութեան համար՝ յորդորելով զօրաւոր հաւատքով, ամուր կամքով ու սիրով շարունակել իրենց սրբազան առաքելութիւնը յանուն Հայոց Եկեղեցու պայծառութեան եւ աշխարհասփիւռ ժողովրդի բարօրութեան:

Յորելեանական տարեդարձի կապակցութեամբ Մայր Աթոռում ստացուել են բազում շնորհատրական ուղերձներ եւ գրութիւններ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Տեղեկատուական համակարգ

15-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ՝ «ԹՈՒՄՕ»-Ն ԿԸ ՑՈՒՑԱԴՐՈՒԻ ՆԻՒ ԵՈՐՔԻ ԹԱՅՄՉ ՍՔՈՒԵՐԻ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՊԱՏՏԱՌԻՆ ՎՐԱՅ

Իր հիմնադրութեան 15-ամեակին առթիւ, հայկական տրարարական կրթական օճախը՝ «Թումօ» ստեղծարար արհեստագիտութիւններու կեդրոնը, ցուցադրուեցաւ Նիւ Եորքի Թայմզ Սքուերի մէջ գտնուող «Nasdaq» աշտարակի հսկայական թուային պաստառին վրայ:

Այս յատկանշական ցուցադրութիւնը կազմակերպուած էր որպէս յոբելիական յատուկ տուրք՝ Nasdaq-ի ներկայացուցիչ Քրիսթինա Այանեանի կողմէ, որ նաեւ պիտի վարէ այս Սեպտեմբերին Լոս Անճըլըսի մէջ կայանալիք Թումոյի 15-ամեակի հանդիսաւոր երեկոյթը: Այս ցուցադրութիւնը զուտ տօնական բնոյթ կը կրէր եւ որեւէ կապ չուներ բաժնետոմսերու հրապարակային առաջարկի (IPO) կամ արժեթուղթերու պաշտօնական ցուցակագրման հետ:

Հսկայական պաստառին վրայ լուսարձակի տակ առնուած էր հետեւեալ մտածել տուող հարցադրումը. «Ի՞նչ կ'ըլլար, եթէ աշակերտները ազատ ըլլային հեռանալու»: Այս նախադասութիւնը կ'ընդգծէ Թումոյի իւրայատուկ՝ ինքնակրթութեան փիլիսոփայութիւնը, որ պատանիներուն առիթ կու տայ առանց կոշտ սահմանափակումներու ազատօրէն կառուցելու եւ ընտրելու իրենց կրթական ուղին այնպիսի մարզերու մէջ, ինչպէս՝ ծրագրաւորումը, կենդանապատկերը (animation), շարժանկարչութիւնը եւ գծագրական ձեւաւորումը (graphic design):



ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԴԱՐԱԵՐՋԱՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՍՈՒՐԵՆ Թ. ՄԱՐԳՍԵԱՆ
ՊԳՂ, փրոֆեսոր

Օրերս սկսուեցին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի իններորդ գումարման նիստերը: Եթե կարճ բնութագրենք, ապա կ'ունենանք մեկ գլխավոր բնութագիր՝ լեզուակռուի, էժանագին զգվռոցի, կողմերի իրարից հին ու նոր մեղքերի բացայայտման ու թաղային լեզուամակարդակի մրցակցություն: Բովանդակությունն, ինչպես մերօրեայ կեանքի ասպարեզների մեծ մասում, գրեթե բացակայում է, կամ անելի ճիշդ՝ շատ մեծ չափերով զիջում է բովանդակությանը: Այնինչ, հարկավոր է անելի սթափ լինել, *օրյեկտի*, որպեսզի գոնե ինչ որ չափով օգտակար լինեն այդ թեկուզ ձեռնարկային լեզուները: Գոնե մասամբ պատկերացնեն, որ XX1 դարի երրորդ տասնամեակն աստիճանաբար վերածույն է մի ժամանակաշրջանի, որտեղ միջազգային յարաբերությունները կորցնում են իրենց կանխատեսելիությունը: Եթե սառը պատերազմի ասրտից յետոյ աշխարհը որոշ չափով առաջնորդում էր գլոբալացման, տնտեսական փոխկախումքի և միջազգային ինստիտուտների ազդեցության աճի տրամաբանությանը, ապա այսօր առաել ակնյայտ է մեկ այլ իրականություն՝ ուժային քաղաքականության վերադարձը, աշխարհաքաղաքական մրցակցության խորացումը և անվտանգության առաջնահերթության գերակայությունը: Այս փոփոխությունը պարզապես հերթական միջազգային ճգնաժամ չէ, այլ համաշխարհային համակարգի կառուցումաժամանակի վերափոխում: Իսկ այդ պայմաններում հարկավոր է անելի սթափ լինել, անելի հաշուենկատ ու զգոյշ:



Այսօր աշխարհը միաժամանակ ապրում է մի քանի փոխկապակցում ճգնաժամներով: Մերձադար Արեւելքում շարունակուող լարումներին, Ուրախանյի շուրջ հակամարտությունը, Չինաստան-Արեւմուտք ռազմավարական մրցակցությունը, էներգետիկ շուկաների անկայունությունը և տեխնոլոգիական գերակայության պայքարը ձեռնարկում են այնպիսի միջավայր, որտեղ նույնիսկ միջին և փոքր պետությունները ստիպում են վերախմաստարել իրենց անվտանգության, տնտեսության և արտաքին քաղաքականության մոդելները: Էներգակիրների գների տատանումները, մատակարարման շղթաների խաթարումները և ռազմավարական ենթակառուցվածքների նկատմամբ վերահսկողության մրցակցությունը ցույց են տալիս, որ տնտեսությունն ու աշխարհաքաղաքականությունը այլևս հնարավոր չէ տարանջատել: Այս համատեքստում առաել կարևոր է հասկանալ, որ ժամանակակից աշխարհում ուժը միայն ռազմական ներուժը չէ: Պետությունների ազդեցությունը որոշում է նաև տեխնոլոգիական ինքնաբերական, ինստիտուցիոնալ արդիւնաւետութեամբ, տեղեկատուական դիմադրողականութեամբ, ժողովրդագրական կայունութեամբ և կրթական կարողություններով: Հետևաբար, այն պետությունները, որոնք շարունակում են ապախել միայն արտաքին հովանաւորութեանը կամ անցեալի անվտանգային մոդելներին, յայտնում են աճող խոցելիության պայմաններում:

Հայաստանի համար այս փոփոխությունները բացառիկ նշանակություն ունեն: Հայաստանը գտնում է մի տարածաշրջանում, որտեղ համընկնում են Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Եւրոպական Միության և Միացեալ Նահանգների շահերը: Տարածաշրջանային հաղորդակցությունների, *էներգետիկ* ուղիների և անվտանգության նոր ճարտարապետության շուրջ ընթացող քննարկումները ցույց են տալիս, որ Հայաստանը այլևս չի կարող իրեն դիտարկել որպես միայն արտաքին ուժերի մրցակցության *օրյեկտ*: Նրա առջե կանգնած է շատ անելի բարդ խնդիր՝ դառնալ այդ գործընթացների գիտակցում և հաշուենկատ մասնակից:

Վերջին տարիները բացայայտեցին մի կարևոր ճշմարտություն. Պետականությունը չի պահպանում միայն պատմական արդարության կամ միջազգային համակրանքի հաշուին: Պետականության իրական երաշխիքը արդիւնաւետ պետական կառույցներն են, մրցունակ տնտեսությունը, գիտելիքահեռ հասարակությունը և ազգային համախմբումությունը: Անվտանգությունը սկսում է ոչ միայն սահմանին, այլև դպրոցում, համալսարանում, գիտահետազոտական կենտրոնում, դատարանում և պետական կառավարման համակարգում:

Հայաստանում հասարակական քննարկումների մեծ մասը շարունակում է կեղոնանալ արտաքին քաղաքական ընտրությունների վրայ՝ Արեւմուտք, Ռուսաստան, տարածաշրջանային գործընկերներ կամ այլ ուղղություններ: Սակայն այս բանավէճը յաճախ ստուերում է առաել հիմնարար հարցը՝ ինչպիսի՞ պետություն ենք կառուցում ներսում: Եթե պետական ինստիտուտները թոյլ են, եթե հանրային վստահությունը նուազում է, եթե ժողովրդագրական խնդիրները խորանում են, ապա արտաքին քաղաքական ցանկացած ուղղություն կ'ունենայ սահմանափակ արդիւնաւետություն:

Այսօր Հայաստանի ամենամեծ մարտահրաւերը ոչ միայն արտաքին վտանգներն են, այլև ժամանակի սղությունը: Աշխարհը փոխում է անելի

Ժողովուրդին ՀԵՏ ԵԿԵՂԵՅԻՆ՝ ՃԵՄԱՐԻՏ ԲԱԶԿԵՐԱԿԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԿԱՄՔԻՆ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՅԱԿՈՐ ՄՐԵՏԻՔԵԱՆ

Ամեն անգամ, երբ կրկին կը սաստկանայ հալածանքը մեր Եկեղեցիին ու եկեղեցականներուն դէմ, առիթ կը գտնեմ այցելելու Երեւանի մեր թաղամասի՝ Նորքի Սբ. Աստուածածին եկեղեցի՝ զոյգ մը մոմ վառելու եւ ժողովուրդին բազկերակը զգալու: Տուֆակերտ գեղեցիկ տաճարը, 90-ականներուն հիմնովին վերանորոգուած յայտնի ազատամարտիկ, հոկտ. 27-ի ոճրագործութեան զոհերէն Արմենակ Արմենակեանի կողմէ, որուն անունով ալ հետագային կոչուած է յարակից պողոտան, ունի ընդարձակ բակ, շրջապատուած գեղեցիկ նոճիներով ու խաչքարերով, հոգեկան անդորրի ու հանգստեան վայր մըն է ոչ միայն հաւատացեալներու, այլ նաեւ՝ փայտէ նստարաններու վրայ նստած երիտասարդ զոյգերու համար:

Այդ օրը, Օգոստոսի 16-ի կիրակին, Սբ. Աստուածածինի տօնի ու խաղողօրհնէրի օրը, թէ՛ բակը, թէ՛ եկեղեցին լեցուն էին. բակը՝ առաւելաբար մանուկներով, որոնք իրենց լաւագոյն զգեստները հագած՝ նման հրեշտակներու, իսկ եկեղեցին...

Առնուազն 15 բալէ պէտք եղաւ մուտք գործելու համար. ներսիները պէտք էր դուրս ելլէին, որպէսզի նորերս ներս մտնէինք:

Պատարագը կ'ընթանար: Երգչախումբը, գեղեցկաձայն սոփրանօ մը, թեմոր մը եւ պարիթոն մը մեր հոգեզմայլ հոգեւոր երգերը կ'երգէին, մինչ օրուան պատարագիչը վար կ'իջնէր խորանէն ու կը սկսէր օրհնել խաղողը:

Հաւատացեալներուն մեծ մասը կիներ էին, որոնցմէ շատերը անգիր գիտէին շարականները ու բազկատարած կը ձայնակցէին դալիւներուն, մինչ տղամարդիկ կանգնած էին մէջտեղը, խորանին դիմաց: Անոնցմէ ոմանք ծնկաչոք էին, բան մը՝ գոր միայն Գիւմրիի եկեղեցիներուն մէջ տեսած եմ:

Բայց ամբողջ տաճարը դողդաց, երբ եզրափակիչ՝ «Յիշատակութիւնք» բաժնին մէջ միահամուռ որոտացին «...Եպիսկոպոսապետին մերոյ եւ պատուական Հայրապետին՝ Տեարն, Տեարն Գարեգնոյ Բ. Սրբազնագոյն Կաթողիկոսի» բառերը:

Պարզ էր. հաւատացեալ ժողովուրդին ինքնաբուխ, կը կրկնեմ՝ ինքնաբուխ այդ պոռթկումը արձագանգն էր ու հակազդեցութիւնը այդ եւ շարունակուող այս օրերին Հայ եկեղեցիին դէմ նիքոլականներու ձեռնարկած նոր արշաւին, որ ժամանակէ մը ի վեր կիսասառած վիճակի մէջ էր: Դատաւորը, որ Վեհափառին դէմ յարուցուած դատական նիստին ինքնաբացարկ յայտարարելով ինքզինք դուրս հանած էր: Ինչպէս հայաստանցին կ'ըսէ՝ հեռու շառից ու փորձանքից, նաեւ՝ իր զաւակներուն ուղղուած ժողովրդային անձեքէն, պահ մը կարկամած թողեր էր Նիքոլի իշխանական խմբակը, որ այժմ վերանորոգ աշխուժութեամբ վերսկսած հալածանքը մեր Եկեղեցիին դէմ, ըստ երեւոյթին իրեն ծառայող ուրիշ դատաւորի մը վստահելով յառաջիկայ Օգոստոս 28-ին տեղի ունենալիք դատական գործը:

Հայ եկեղեցւոյ, Հայոց Հայրապետի, ընդհանրապէս հայ ազգային գիտակցութեան, Օշականի բառն օգտագործելով՝ հոգեխառնութեան դէմ այս պայքարը պէտք է վերջ գտնէ, բան մը՝ որուն դէմ Հայաստանի ներկայ իշխանութիւնը, որ տակաւին կը յաւակնի ինքզինք կոչել ժողովրդավարական, հանդուրժողական, բարեճողական եւ պայքար կը տանի ոչ միայն Հայ եկեղեցիին, այլեւ՝ սփիւռքահայութեան դէմ: Այն սփիւռքահայութեան, որ, դժբախտաբար, հետզհետէ անելի քիչ ու նուազող թիւերով կը փորձէ Սփիւռքի տարածքին պահպանել իր ազգային ինքնութիւնը:

Մարդը, կամ մարդուկը, որ ինքզինք կը կարծէ գերմարդ, գերպետութիւն ու մեծագոյն հեղինակութիւն, երկիրը, հողերը, հայրենիքը կ'ուզէ ծախել մեր դարաւոր թշնամիներուն, չի՛ կրնար, ոչ ոք չէ՛ կրցած եւ պիտի չի՛ կրնայ ծախել, զիջիլ ուրիշներուն:

Նորքի Սբ. Աստուածածին եկեղեցիին մէջ մէկտեղուած հաւատացեալներուն պատգամն այդ օր այն էր:

Ոչ մէկ ուժ, ոչ մէկ իշխանութիւն չի՛ կրնար յաղթել ժողովուրդին, հայ ժողովուրդին:

Երեւան

Խմբագրութեան համակարգող՝	Դոկտ. Արշաւիր ԿԵՏՆՃԵԱՆ (Մոնթրէալ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ջըրզի)
Խմբագրական Կազմ	
Յակոբ ԱՆԵՍԻԵԱՆ	(Երեւան)
Պայծիկ ԳԱԼԱՅՃԵԱՆ	(Պէյրուօ)
Զաւէն ԳՐԻԳՈՐԵԱՆ	(Լթէնք)
Վաչէ ՍԵՆԵՐՃԵԱՆ	(Լոս Անճելըս)
Ֆաւցէ	
Baikar Association Inc. 755 Mt. Auburn Street Watertown, MA 02472 U.S.A. Website: www.baikarweekly.com E-mail: baikarweekly@gmail.com Tel: 1-201-406-9771 Fax: 1-201-661-8722	

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ՈՒՍՏԻ ՕՐՈՒԱՆ ՆՇՈՒՄ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՄԷՉ

ՄԱՅՐ ԱՔՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 16-ին Հայաստան-եայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստուածածնի Վերափոխման տօնը։ Բերկրառատ օրուայ առիթով Միածնաէջ Մայր Տաճարում մատուցուեց Սուրբ եւ Անմահ Պատարագ։ Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Գերաշնորհ Ս. Հայկազուն արքեպիսկոպոս Նաճարեանը։

Ներկայացնելով տօնի խորհուրդը՝ պատարագիչ Սրբազանը խօսեց Աստուածածնի աւետարանական կերպարի մասին, որով մենք տեսնում ենք, թէ ինչպէս է Սուրբ Կոյսը հնազանդութեամբ ստանձնում Տիրամօր պատիւը եւ իր ժողովրդի համար իբրեւ բարեխօս մշտապէս դիմում իր Որդուն՝ Յիսուս Քրիստոսին։ Այս առիթով Հայկազուն սրբազանը յորդորեց ներկաներին, որպէսզի իրենց աղօթքներում մշտապէս խնդրեն Աստուածամօր բարեխօսութիւնը։



Այնուհետեւ Սրբազան Հայրը, անդրադառնալով Վերափոխման տօնի հետ կապուած բանաւոր ասանդութեանն ու Եկեղեցւում եւ հայ իրականութեան մէջ Սուրբ Կոյսի նշանակալի տեղին, ընդգծեց, որ մեր հայրերը բազմաթիւ եկեղեցիներ եւ սրբավայրեր կոչել են Աստուածամօր պատուին, մեր եկեղեցիների խորանները նուիրուել են Սուրբ Կոյսին՝ մանուկ Յիսուսի հետ միասին, իսկ հայ մայրերից շատերը դուստրերին անուանել են Մարիամ՝ իրենց մարտւոմ ունենալով Տիրամօր բացառիկ առաքինի կերպարը։

Սուրբ Պատարագի ասարտից յետոյ եկեղեցականաց թափօրը Մայր Տաճարից ուղղուեց դէպի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարուեց «խաղողօրհնէքի» հանդիսաւոր կարգը։

Յաւարտ օրհնութեան կարգի Վեհափառ Հայրապետն իր օրհնութեան խօսքը ուղղեց հաւատաւոր ժողովրդին, որից յետոյ, ներկաներին բաժանուեցին օրհնուած խաղողի ողկոյզները։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Տեղեկատուական համակարգ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԹ Եւ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՒԱՐՏԻՆ

Սիրելի՛ բարեպաշտ հաւատաւոր զաւակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւո, կատարեցինք Խաղողօրհնութեան կարգը, օրհնեցինք խաղողի ողկոյզները եւ այն այգիներն ու անդաստանները, որտեղից առաքում, բերում են պտուղները՝ ի վայելումն մեր ժողովրդի։



Մենք միաժամանակ հայց եւ աղօթք բարձրացրեցինք, որպէսզի Սուրբ Աստուածամօր բարեխօսութեամբ առատօրէն հեղուեն շնորհներն ու օրհնութիւնները մեր կեանքի, մեր կեանքը դառնայ պտղաբեր՝ բարութեամբ ու բարիքներով, եւ մենք՝ մեր ժողովրդի զաւակունք, ի Հայաստան եւ ի Սփիւռս, լաւատեսութեամբ, յոյսով ու հաւատքով շարունակենք արարել, շէնացնել մեր հայրենիքը եւ բարօր դարձնել մեր ժողովրդի կեանքը, որպէսզի կարող լինենք մշտապէս հեռու վանել ժամանակների մատուցած բոլոր փորձութիւնները մեզմից եւ կարողանանք կերտել լուսաւոր, բարօր, երջանկաբեր ապագան մեր ժողովրդի համար։

Թող Տիրոջ սէրը, շնորհը եւ օրհնութիւնը միշտ լինեն ազգիս զաւակների հետ՝ այսօր եւ յաիտեանս. Ամէն։

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ՈՒՍՏԻ ՕՐՈՒԱՆ ՆՇՈՒՄ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՄԷՉ

«Արժէք, ասանդութիւն, ընտանիք»՝ առանցքը Արամ Ա. Վեհափառ Հայրապետի պատգամին

Ուխտաւորներ մեծ ոգւորութեամբ ու երկիւղածութեամբ կը սպասեն Սուրբ Աստուածածին Վանքի ուխտի օրուան՝ բարձրանալու համար Պիքֆայայի համանուն Վանք, շաբթուան ընթացքին մասնակցելու ուխտի շաբթուան հոգեւոր դասախօսութիւններուն ու արարողութիւններուն, ուրբաթ գիշեր՝ մատաղի ասանդական պատրաստութեան, իսկ շաբաթ գիշեր՝ ուխտի Սուրբ Պատարագին եւ մատաղօրհնէքի ու խաղողօրհնէքի արարողութեանց եւ վերջապէս՝ ունկնդրելու Վեհափառ Հայրապետին պատգամին։



Առ այդ, հազարաւոր ուխտաւոր հայորդիներ, Շաբաթ, 15 Օգոստոս 2026-ի երեկոյեան, հաւաքուած էին Սուրբ Աստուածածին Վանքի համալիրին մէջ՝ մասնակցելու ուխտի Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ խաղողի ու մատաղի օրհնութեան, որոնց հանդիսապետեց Սուրբ Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետը։ Օրուան պատարագիչն էր Մայր Տաճարի լուսարարապետ Գերաշնորհ Ս. Սիփան Արք. Քէչեճեան։ Սուրբ Պատարագի գեղեցիկ երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը՝ Հոգեշնորհ Ս. Զաւէն Վրդ. Նաճարեանի խմբավարութեամբ։ Նշենք, որ Սուրբ Պատարագը ուղղակիօրէն սփռուեցաւ տեղական հեռատեսիլի կայաններէն, ինչպէս նաեւ Կաթողիկոսարանի Սիլիսիա Թի Վի-ի (Cilicia TV) Facebook-ի եւ Youtube-ի էջերէն։



Սուրբ Պատարագի ասարտին, Վեհափառ Կաթողիկոսը, բարձրաստիճան միաբան հայրերու ուղեկցութեամբ, բարձրացաւ խորան եւ կատարեց խաղողօրհնէք ու մատաղօրհնէք։ Ապա, ան յղեց իր հայրապետական պատգամը։ Նորին Սուրբ Օծութիւնը ըսաւ. «Մեր ժողովուրդի կեանքին լայն չափով ծանօթ ըլլալով, խոր մտահոգութեամբ կը հաստատենք, որ, որպէս ազգ, հայրենիք ու եկեղեցի, կ'ապրինք դժուար պայմաններու մէջ. կը շարունակենք դիմագրաւել ներքին թէ՛ արտաքին մարտահրաւերներ ու տագնապներ։ Այս կացութեան դիմաց, մեր ինքնութեան ողջ պահպանումը եւ մեր գերագոյն ու ընդհանրական իտելալներու ու արժէքներու շուրջ ազգին համախմբումը մեզի համար կը մնայ առաջնահերթ»։

Այս ահագանգին դիմաց Հայրապետը թելադրեց ունենալ մեր դիրքորոշումն ու մօտեցումը, մանաւանդ ներկայ յարափոփոխ աշխարհին մէջ. «Եկեղեցին չի կրնար անտարբեր ըլլալ մեր ժողովուրդը յուզող խնդիրներուն ու շրջապատող տագնապներուն նկատմամբ». ան դիտել տուաւ, որ Եկեղեցին ինքնակեղծութիւնն ու ինքնանպատակ գոյութիւն մը չէ, այլ դէպի ժողովուրդ ուղղուած առաքելութիւն է, որ կ'առաջնորդուի Քրիստոսի աշխարհի բերած ճշմարտութիւններով ու սկզբունքներով։ «Եկեղեցւոյ դերը հրահանգել չէ, այլ՝ ծառայել, վկայել, ուսուցանել, օժանդակել, յիշեցնել եւ, անհրաժեշտութեան պարագային, Քրիստոսի ներկայութեամբ հզօրացած՝ առաջնորդել», ընդգծեց Հայրապետը։

Մեկնելով այս մօտեցումէն՝ Նորին Սրբութիւնը հայ կեանքին մէջ գոյութիւն ունեցող չորս հիմնական ու այժմեական բնագաւառներու անդրադարձաւ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒԵԼԵԱՆ
ԹԵՄԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐՇ. Տ. ՄԵՍՐՈՊ
ԵՊՍ. ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ամերիկայի Հայ Եկեղեցույ Արեւելեան Թեմին Առաջնորդը եւ Թեմական Խորհուրդը մեր խոր մտահոգութիւնը կը յայտնենք Հայաստանի Կառավարութեան այն որոշումին առնչութեամբ, որով քրեական հետապնդում կը սկսի Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոսին դէմ՝ Հայ Եկեղեցույ ներքին եկեղեցական կառավարման հարցի մը կապակցութեամբ:

Սոյն յայտարարութիւնը կ'ընենք Հայաստանի Հանրապետութեան եւ Հայ Առաքելական Եկեղեցույ հանդէպ յարգանքի ոգիով՝ զանոնք երկուքն ալ նկատելով մեր ազգի կեանքին անփոխարինելի սիւները: Մենք կը յարգենք Հայաստանի օրինականօրէն ընտրուած կառավարութեան իշխանութիւնը եւ պետական հաստատութիւններուն վստահուած պարտականութիւնները: Միաժամանակ, Նորին Սրբութիւն Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը համաշխարհային Հայ Եկեղեցույ օրինականօրէն ընտրուած եւ օծուած հոգեւոր առաջնորդն է, որուն կեանքն ու կառավարումը կը սահմանուին Եկեղեցույ Սուրբ Կանոններով եւ անոր հաստատուած եկեղեցական գործընթացներով:

Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը Հայ Առաքելական Եկեղեցին կը ճանչնայ իբրեւ Ազգի Եկեղեցին եւ կը հաստատէ անոր ինքնակառավարման իրաւունքը: Այս պատճառով, Եկեղեցույ կառավարման, կարգապահութեան եւ առաջնորդութեան վերաբերող հարցերը պատշաճօրէն կը պատկանին Եկեղեցույ սեփական կանոնական կարգին: Կը հաւատանք, որ եկեղեցական կառավարման հարցերը աշխարհիկ դատարաններու առջեւ ներկայացնելը հակասական է դարբերու նախադէպերուն եւ Հայ Եկեղեցույ ինքնակառավարման իրաւունքի սահմանադրական ճանաչման:

Երբ Հայաստանը կը դիմագրաւ տարածաշրջանային եւ ազգային լուրջ մարտահրաւերներ, Պետութիւնն ու Եկեղեցին մեր ժողովուրդին լուսազոյն կը ծառայեն, երբ փոխադարձ յարգանքով եւ համագործակցութեան վերանորոգ ոգիով, կարենայ իւրաքանչիւրը կատարել իրեն յստակ պարտականութիւնները: Մեր ազգին ուժը միշտ կախում ունեցած է այս երկու հաստատութիւններուն ուժէն եւ ամբողջականութենէն:

Բոլոր շահագրգիռ կողմերուն կոչ կ'ուղղենք՝ ցուցաբերելու իմաստութիւն եւ զսպութիւն, եւ վերանորոգելու երկխօսութեան իրենց յանձնարարութիւնը: Մեր անկեղծ աղօթքն է, որ այս հարցը լուծուի այնպիսի ձեւով մը, որ յարգէ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը, պատուէ Հայ Առաքելական Եկեղեցույ կանոնական օրինականութիւնները, պահպանէ բոլոր կողմերուն արժանապատուութիւնը եւ ամրապնդէ մեր ժողովուրդին միութիւնը՝ Հայաստանի եւ Սփիւռքի ամբողջ տարածքին:

Ամերիկայի Հայ Եկեղեցույ
Արեւելեան Թեմի Առաջնորդը եւ Թեմական Խորհուրդը

Նիւ Եորք
5 Օգոստոս 2026

«ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ»

Իսկ ինչու՞ են լռում Ֆրանսիայի ԱԳՆ-ն ու ԱՄՆ պետդէպարտամենտը: Ի վերջոյ ինչու՞ են լռում Փաշինեանն ու Հայաստանի ԱԳՆ-ն. խօսելու հրահանգ արեւմուտքից դեռ չկա՞յ...

«Ռուսաստանը դատապարտում է Ստեփանակերտում հայկական եկեղեցիների ոչնչացումը եւ չի փոխում իր դիրքորոշումը. յուշարձանների դէմ պատերազմը անընդունելի է, անկախ նրանից, թէ որտեղ է դա տեղի ունենում»: Այս մասին ճեպագրոյցի ժամանակ յայտնել է Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: «Մենք կրկնակի չափանիշներ չունենք. դա չի կարելի անել ոչ մի տեղ»,— ընդգծել է նա:

Չախարովան նշել է, որ Ռուսաստանը «բոլորից լաւ» գիտի, թէ ինչ է նշանակում, երբ ոչնչացւում են համատեղ մշակոյթի եւ պատմութեան հետ կապւած յուշարձաններ: «Մենք կրկնակի չափանիշներ չունենք. դա չի կարելի անել ոչ մի տեղ»,— ընդգծել է նա:

ՌԴ ԱԳՆ խօսնակը ուշադրութիւն է հրաւիրել պաշտօնական Երեւանի արձագանգի բացակայութեան վրայ՝ առաջարկելով լրագրողին հարցն ուղղել առաջին հերթին ՀՀ իշխանութիւններին: «Շատ լաւ կը լինէր նման հարցեր տալ առաջին հերթին Հայաստանի ղեկավարութեանը»,— ասել է նա:

Չախարովան նաեւ յիշեցրել է Ռուսաստանի, Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ 2020-2022 թթ. եռակողմ համաձայնագրերը, որոնք նախատեսում են մարդասիրական հաշտեցման ուղի, ներառեալ կալանաւորուածների եւ փախստականների վերադարձը: Ռուսաստանը, նրա խօսքով, պատրաստ է օգնել նման հարցերի լուծմանը, եթէ նման խնդրանք լինի:

Ռուսաստանը դատապարտեց Արցախի հայկական յուշարձանների ոչնչացումը: Իսկ ինչու՞ են լռում Ֆրանսիայի արտգործնախարարութիւնն ու ԱՄՆ պետդէպարտամենտը: Ի վերջոյ ինչու՞ են լռում Նիկոլ Փաշինեանն ու Հայաստանի ԱԳՆ-ն. մենք ինչի՞ համար ենք նրանց աշխատավարձ վճարում մեր հարկերից, լռութեամբ համար: Թէ՞ խօսելու հրահանգ արեւմուտքից դեռ չկա՞յ...

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆԵԱՆ

"Երրորդ Ուժ Պլիւս" անկախ թերթի գլխաւոր խմբագիր

Ըստ հայկական ՁԼՄ-ներու հրապարակումներուն՝ "Երրորդ Ուժ Պլիւս"-ը բացուած է արցախցի յայտնի բարերար Լեւոն Հայրապետեանի եւ արցախցի լրագրող Վահրամ Աղաջանեանի համատեղ նախաձեռնութեամբ: ԱՄՆ իշխանութիւններու պատուէրով թերթը ապօրինաբար փակուած է Մերժ Մարգարեանի եւ անոր դուրսի տէրերու ջանքերով:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔԻ ՌԻԽՏԻ ՕՐՈՒԱՆ ՆՇՈՒՄ ՊԻՔՅԱՅԱՅԻ ՄԷՉ

(Շարունակուած 3-րդ էջէն)

Առաջին հերթին, ան խօսեցաւ արժեքներու վերակենսաւորման հրամայականին մասին՝ նշելով, որ արժեքները ժողովուրդի մը ինքնուրոյն գոյութեան հէնքն են, հետեւաբար, անոնց նահանջը նահանջն է նաեւ ազգին: Այս առումով, Վեհափառ Հայրապետը ընդգծեց իրապաշտ ըլլալու անհրաժեշտութիւնը. «Համաշխարհայնացած ներկայ աշխարհին մէջ մեր արժեքները սկսած են հետզհետէ նահանջել, տեղ մը դառնալով լուսանցքային, այլ տեղ՝ ապագային: Այս վտանգալից երեւոյթը կրնայ մեր ինքնութեան արմատները փճացնել եւ մեր ինքնուրոյն գոյութեան հիմքերը տկարացնել: Հայապահպանում կը նշանակէ ինքնութեան առողջ պահպանում: Ինքնութեան առողջ պահպանում կ'ենթադրէ արժեքներու անվար պահպանում ու անոնցմով հայ կեանքի վերակենսաւորում: Մեր կեանքի բոլոր պայմաններուն մէջ պէտք է ըլլանք հաւատարիմ մեր արժեքներուն նկատմամբ»:

Երկրորդ կէտով Արամ Ա. Կաթողիկոս խօսեցաւ հոգեւոր կեանքի վերաշէշտման հրամայականին մասին: Ան անդրադարձաւ հայ ժողովուրդին ստեղծած ու պահպանած արժեքներուն իրարու հետ սերտօրէն շաղախուած ըլլալուն: Ան յայտնեց, որ պատմութիւնը կը վկայէ, որ հայ կեանքին մէջ քրիստոնէութիւնը հայացաւ ու հայութիւնը քրիստոնէացաւ, այլ խօսքով՝ երկուքը մէկը ամբողջութեամբ կազմեցին: Ան յորդորեց հոգեւոր արժեքները չդիտել եկեղեցական ու ծիսական նեղ պարունակին մէջ, այլ դիտել մեր ժողովուրդին համայնական կեանքի շրջագիծէն ներս: «Մենք որքա՞ն կարիքը ունինք ներկայ աշխարհի ժխտին մէջ Աստուծոյ ներկայութիւնը պարելու: Հեռու Աստուծմէ՝ մեր կեանքը պիտի կորսնցնէ իր իմաստը, նպատակն ու ճամբան»: Այս առումով Հայրապետը նշեց, որ շաբաթ մը առաջ շուրջ հարիւր երիտասարդներ Սուրբ Աստուածածին Վանքին մէջ մասնակցեցան Կաթողիկոսութեան Երիտասարդական Բաժանմունքին կազմակերպած հոգեւոր կեանքի վերանորոգման նուիրուած համագումարին եւ քաջալերեց, որ այս երեւոյթը ծաւալի մեր ազգի կեանքին մէջ:

Իր պատգամի երրորդ կէտին մէջ Վեհափառ Հայրապետը նշեց, որ հոգեւոր կեանքին հետ անմիջականօրէն աղերս ունին մեր ազգին ու եկեղեցույ աւանդութիւններուն առողջ պահպանումը: Ան յիշեցուց, որ 2025 թուականը հռչակած էր «Աւանդութիւններու վերակենսաւորման տարի», որուն առիթով

աւանդութիւններու կենսական կարեւորութեան նկատմամբ ներքին գիտակցութիւնը մեր ժողովուրդին աւելի ամրապնդուեցաւ: Միաժամանակ ան զգուշացուց, որ աւանդութիւնը պէտք չէ շփոթենք սովորութիւններու հետ, որովհետեւ առաջինը, իր հարազատ ըմբռնումով, ժողովուրդի ներքին ապրումներուն ու ձգտումներուն արտայայտութիւնն է: «Աւանդութիւնները կ'երաշխաւորեն ժողովուրդի մը ամբողջականութիւնը եւ կը զօրացնեն անոր գոյութեան արմատները: Ներկայ համաշխարհայնացած աշխարհին մէջ, ուր նաեւ մեր ազգի զաւակները աշխարհագրական իմաստով իրարմէ հեռու կ'ապրին ու անմիջականօրէն ենթակայ են զիրենք շրջապատող այլ աւանդութիւններու եւ ինքնութիւններու, որպէս փոքր ազգ, մենք որքա՞ն հրամայական անհրաժեշտութիւնը ունինք հաւատարիմ մնալու մեր աւանդութիւններուն»:

Վերջապէս, Հայրապետը իր պատգամին չորրորդ բնագաւառը յատկացուց հայ ընտանիքին, որ միջնաբերդն է մեր ազգի արժեքներուն ու աւանդութիւններուն առողջ պահպանման ու փոխանցման: Սրբութիւնը անգամ մը եւս յատուկ կերպով խօսեցաւ ընտանիքի, յատկապէս մօր դերակատարութեան մասին: «Փոխադարձ սէրը, վստահութիւնն ու հաւատարմութիւնը պէտք է դառնան տիրող ներկայութիւն հայ ընտանիքէն ներս: Հայ ընտանիքը, ինչպէս Աստուածաշունչը կը վկայէ, Աստուծոյ կողմէ հաստատուած կառոյց է. հարկ է, որ մեր հոգեւոր հայրերը միշտ կոչ ուղղեն մեր ժողովուրդի զաւակներուն ա՛յս գիտակցութեամբ ու նախանձախնդրութեամբ ընտանիք կազմելու: Չմոռնանք երբեք, որ ազգ մը կը կործանի եւ եկեղեցի մը իր առաքելութենէն կը շեղի, երբ անոնց կեանքին զօրեղ հիմքը կազմող ընտանիքը կը կորսնցնէ իր սրբութիւնը»:

Վեհափառ Հայրապետը իր պատգամը եզրափակեց՝ ըսելով. «Արժեք, աւանդութիւն, ընտանիք: Ահաւասիկ մեր ազգի ինքնութեան ամուր պահպանման ու յանձնարարութեան երթին հզօրացման զօրեղ կառոյցները: Մնանք հաւատարիմ մեր պատմութեան կողմէ մեզի ժառանգուած մեր ինքնուրոյն գոյութեան այս հիմնասիւններուն»:


Սուրբ Աստուածածին Վանքի ուխտի օրը աւարտեցաւ համաբերան Տէրունական Աղօթքի եւ «Կիլիկիա» օրհներգի երգեցողութեամբ: Ապա, Հաւատացեալները Սուրբ Հաղորդութիւն եւ օրհնուած խաղող ու մատաղ ստացան:

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»-ին

1920-ականների ճահիճներին մինչև Մանկութեան Յուշերս

Մեր կեանքին մէջ կան վայրեր որոնք յաճախ կը յիշենք, եւ կան տեղեր, ուրոնք մաս կը դառնան մեր ինքնութեան: Ինծի համար Պուրճ Համուտը պարզապէս թաղամաս մը չէ ուր ծնած եւ ատենօք ապրած եմ: Ան մաս կը կազմէ իմ ինքնութեանս, մանկութեանս եւ այն պատմութեան, որ կերտեցին լիբանանահայ սերունդներ:



Ծնած եմ 1960-ականներուն եւ մանկութեանս մեծ մասը անցուցած եմ Պուրճ Համուտի մէջ: Այդ տարիքին չէի ըմբռնէր գիս պարուորդ պատմութիւնը: Չէի գիտեր, որ այն փողոցները, ուր կը խաղայի, կառուցուած էին իմ ծնունդէս տասնամեակներ առաջ, Հայոց ցեղասպանութենէն մազապուրծ Լիբանան հասած մարդոց կողմէ: Չէի անդրադառնար, որ այդ համեստ տունները, փոքր խանութները, դպրոցները, եկեղեցիները, արհեստանոցները, հացատուներն ու խճողուած փողոցները, որոնք լիովին միջակ ու սովորական կը թուէին ինծի, իրականութեան մէջ տոկունութեան, գոյատեւման եւ վերաշինութեան արտակարգ պատմութեան մը արդիւնքն էին:

Ինծի համար Պուրճ Համուտը պարզապէս տուն էր: Այն տեղն էր, ուր հասակ առի, ուր կը ճանչնայի փողոցները, մարդիկը, եւ ուր կեանքը կը թուէր եռալ չորս կողմս: Միայն շատ աւելի ուշ, երբ մեծցայ եւ սկսայ հասկնալ մեր ժողովուրդին պատմութիւնը, անդրադարձայ, որ բախտաւոր եղած էի ապրելու միջավայրի մը մէջ, որ երբեք չէր կրնար նոյն ձեւով կրկնուիլ: Ես հասակ կ'առնէի վայրի մը մէջ, ուր սփիւռքի հայոց պատմութիւնը կը կերտուէր:

Սակայն, հասկնալու համար, թէ Պուրճ Համուտը ի՞նչ նշանակութիւն ունէր իմ սերունդիս համար, պէտք է երթանք մինչեւ սկիզբը: Պէտք է վերադառնանք 1920-ականներուն, երբ Հայոց Յեղասպանութենէն վերապրած հայերը սկսան հասնիլ Լիբանան՝ կորսնցնելէ ետք իրենց տունները, ընտանիքները, համայնքները եւ գրեթէ ամէն ինչ, որ ատենօք ունէին: Անոնք հասան ոչ թէ շքեղութիւն կամ առիթներ փնտռելու, այլ իբրեւ վերապրողներ, որոնք ապահով տեղ մը կը փնտռէին վերստին իրենց կեանքը սկսելու համար:

Եւ անոնք վերստին սկսան կերտել ու գոյատեւել:

Այն հողը, որ ի վերջոյ պիտի դառնար Պուրճ Համուտ, զարգացած քաղաքային կեդրոն մը չէր որ կը սպասէր իրենց: Անոր մեծ մասը ճահճահող էր (wetland): Սակայն հոն հասնողները կրցան տեսնել իրենց առջեւ ծառացած դժուարութիւններէն անդին: Անոնք տեսան տուն մը, համայնք մը եւ ի վերջոյ իրենց զաւակներուն համար ապագայ մը կերտելու կարելիութիւնը:

Անոնք աշխատեցան ինչ որ գիտէին: Տուներ կառուցեցին, փոքր գործեր բացին, եկեղեցիներ հաստատեցին, դպրոցներ հիմնեցին եւ կամաց-կամաց կերպարանափոխեցին իրենց շուրջի տարածքը: Ինչ որ սկսաւ իբրեւ ապաստարան, աստիճանաբար դարձաւ ծաղկուն հայկական համայնք մը:

Յեղասպանութենէն ետք, հայկական երեք գլխաւոր քաղաքական կուսակցութիւնները՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը եւ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, օգնեցին Լիբանանի մէջ հիմնելու դպրոցներ, մշակութային հաստատութիւններ եւ մամուլի միջոցներ, միաժամանակ ապահովելով խորհրդարանական ներկայացուցչութիւն՝ յատկացուած աթոռներու միջոցով: Անոնք կենսական դեր խաղացին ընկերային եւ կրթական ենթակառուցուածքը կազմակերպելու գործին մէջ, ներառեալ եկեղեցիներ, մարզական ակումբներ, բարեսիրական կազմակերպութիւններ եւ թերթեր՝ արմատախիլ եղած գաղթականներուն համար կառուցելով շատ աւելին, քան պարզապէս ֆիզիքական թաղամասեր:

Տեղահանուած ժողովուրդի մը համար, գոյատեւումը կը պահանջէր պահպանել իրենց լեզուն, մշակոյթը, ասանդութիւնները, հաւատքն ու ինքնութիւնը՝ դպրոցները դարձնելով վճռորոշ վայրեր, ուր երեխաները սերունդէ սերունդ տրվեցան իրենց արմատներն ու պատմութիւնը: Եկեղեցիները համանման դեր կատարեցին՝ ծառայելով իբրեւ համայնքային կեդրոններ եւ խարխալներ՝ տարագրութեան անորոշութիւններուն մէջ, ընտանիքները դանդաղօրէն վերածելով թաղամասերու եւ պսակուելով Պուրճ Համուտի աշխոյժ համայնքով: 1960-ականներուն, այս հիմնարար կառոյցները արդէն ամբողջութեամբ հաստատուած էին նախորդ սերունդներու կողմէ՝ փոխանցելով տեւական հաստատութեան ժառանգութիւն մը, որ կերտուած էր առեւտրի գոհողութիւններով:

Իմ յուշերս շատ տարբեր են այն պատմական նկարագրութիւններէն, որոնք կը կարդանք այսօր: Երբ կը մտածեմ Պուրճ Համուտի մասին, նախ թուականներ կամ վիճակագրութիւններ չեմ յիշեր: Կը մտաբերեմ ձայները, բուրմունքը, դէմքերը, իրարանցումը, շէնքերն ու շարժումը, որոնք բոլորն ալ քանդակուած են յիշողութեանս պատերուն վրայ: Կը յիշեմ թաղամաս մը, որ ան-

դադար աշխոյժ էր: Փողոցները կրնային խճողուած ու աղմկոտ ըլլալ, բայց ամէնուրեք եռանդ կար: Մարդիկ կ'աշխատէին, կը խօսէին, գնումներ կ'ընէին, իրարու կը տեսնէին եւ իրենց զաւակները կը մեծցնէին: Նեղ փողոցները լեցուն էին կեանքով, եւ պատերը կարծես կը պահէին սերունդներու ձայները:

Կը յիշեմ հայկական ուտելիքներու բուրմունքը, որոնք կու գային տուներէն ու խանութներէն: Նոր թխուած լաւմաճունի, ապուխտի “պաստրմայի”, երշիկի “սուճուխի”, “պէօրէկի”, լիցք “տոլմայի եւ սարմայի”, իսկ աւելի ուշ՝ լիբանանեան “ֆուլի, քնէֆէյի ու մանաիշի” բոյրը կը տարածուէր փողոցներուն մէջ եւ մաս կը կազմէր առօրեայ կեանքի մթնոլորտին: Ուտելիքը պարզապէս բան մը չէր, որ կ'ուտէինք, այլ մաս էր մեր ինքնութեան ճանաչման:

Կը յիշեմ սուրճը, գրոյցները, խնդուքը եւ մարդոց իրարու ճանչնալու մտերմութիւնը: Այն օրերուն, թաղը կրնար թուիլ գրեթէ մէկ մեծ ընտանիք: Դուն կը ճանչնայիր շրջապատիդ մէջ բնակող ընտանիքները, անոնք ալ կը ճանչնային քուկդ: Երեխաները միասին կը մեծնային, իսկ մեծերը յաճախ այնքան բնականօրէն կը գուրգուրային իրարու զաւակներուն որքան իրենց սեփականին: Մենք չունէինք այն արհեստագիտութիւնը (technology), որ այսօր կը սահմանէ յարաբերութիւնները: Պէտք ալ չունէինք: Թաղը ինքնին կը կապէր մեզ իրարու:

Իբրեւ երեխայ, երբեք կանգ չառի մտածելէ, թէ Պուրճ Համուտը հարուստ թէ աղքատ կը համարուէր: Անկկա պարզապէս իմ ճանչցած աշխարհս էր: Չայն չէի համեմատեր ուրիշ երկիրներու, հազարաւոր մղոններ հեռու գտնուող թաղամասերու հետ, այլ միայն երէկուան հետ:

Եւ թերեւս ատոր համար է, որ այսօր դժուարութիւն կ'ունենամ ընդունելու, երբ կը լսեմ մարդիկ, որոնք Պուրճ Համուտի մասին կը խօսին միայն ժխտական երանգներով:

Այո՛, խճողուած էր: Այո՛, շատ մը ընտանիքներ համեստօրէն կ'ապրէին: Այո՛, կեանքը կրնար դժուար ըլլալ: Բայց նեղութիւնները ամբողջ պատմութիւնը չեն պատմեր: Եթէ նայինք միայն անոր, թէ Պուրճ Համուտը ինչէ՛ր գուրկ էր, պիտի մոռցած ըլլանք, թէ անոր ժողովուրդը ինչեր՝ իրագործեց:

Հոն ապրող մարդիկ դարձան արհեստաւորներ, առեւտրականներ, ձեռներէյցներ (entrepreneur), կրթական մշակներ, երաժիշտներ, արուեստագէտներ, գիտնականներ եւ մասնագէտներ: Անոնք զարգացուցին գործեր ու արհեստներ, որոնք կարելուր դարձան ոչ միայն հայ համայնքին, այլեւ ամբողջ Լիբանանի համար: Վարպետ ոսկերիչներ մշակեցին արտակարգ հմտութիւններ (skills) եւ իրենց նպաստը բերին Պէյրութի հռչակաւոր ոսկերչական շուկաներուն: Դերձակներ, հագուստեղէն արտադրողներ, կօշկակարներ եւ կաշեգործներ հաստատեցին ծաղկուն գործեր: Ժամագործներ, ելեկտրագէտներ, ջրնուղագործներ (plumbers), մեքենագէտներ եւ այլ արհեստաւորներ զարգացուցին մասնագիտական գիտելիքներ եւ արտադրեցին սարքաւորումներ ու մեքենական մասեր, որոնք նպաստեցին շինարարութեան եւ առեւտուրին:

Անոնք պարզապէս գործեր չէին: Ծառ մը ընտանիքներու համար այս արհեստները իրենց ինքնաբերական եւ նիւթական անկախութեան հիմքն էին: Արհեստաւոր մը կրնար սորվիլ հմտութիւն մը եւ զայն փոխանցել իր զաւկին: Փոքր խանութ մը կրնար դառնալ ընտանեկան հաստատութիւն: Երիտասարդ մը կրնար արհեստ սորվիլ եւ կերտել ապագայ մը, որ անոր ծնողքը ատենին չէր ալ կրնար երեւակայել:

Ոսկիի, կաշիի, կտորի, մետաղի, փայտի եւ մեքենաներու վրայ աշխատող ձեռքերը կ'օգնէին կառուցելու աւելին, քան պարզապէս անհատական ապրուստ: Անոնք կ'օգնէին կերտելու Լիբանանը:

Եւ Պուրճ Համուտի նպաստը Լիբանանին չէր սահմանափակուեր տնտեսութեամբ: Անոր ժողովուրդը իր նպաստը բերաւ նաեւ երկրի մշակութային կեանքին: Երաժշտութիւնը, թատրոնը, դասական կատարումները, երգչախումբերը, էսքրատային եւ տարբեր ժանրի երաժշտութիւնները դարձան այս համայնքէն ծնունդ առած հարուստ գեղարուեստական միջավայրի մէկ մասը: Թաղը լեցուն էր ոչ միայն աշխատիլ գիտցող անձերով, այլեւ ստեղծագործել գիտցող մարդոցմով:

Աշխատանքի եւ ստեղծագործութեան այդ համադրութիւնը կարելուր բան մը կ'ըսէ Պուրճ Համուտը կերտող մարդոց մասին: Անոնք չէին ուզեր պարզապէս գոյատեւել: Անոնք կ'ուզէին, որ իրենց զաւակները ապրին, սորվին, ստեղծագործեն ու երազեն:

Եւ այդ երազներէն ոմանք հասան Պուրճ Համուտի փողոցներէն շատ անդին: Ամենաուշագրաս օրինակներէն մէկը Հայկազեան Բողէճի Հրթիռային Ընկերակցութեան պատմութիւնն էր եւ ինչ որ ետքը կապուեցաւ Լիբանանեան Հրթիռային Ընկերակցութեան հետ: 1960 Նոյեմբերին, Բնագիտութեան եւ Թուաբանութեան դասախօս՝ Մանուկ Մանուկեան եւ հայ ու լիբանանցի ուսանողներու խումբ մը հիմնեցին Հայկազեան Բողէճի Հրթիռային Ընկերակցութիւնը: Անոնք ծրագրեցին, կառուցեցին եւ արձակեցին պիմո վառելանիւթով հրթիռներ, ներառեալ «Մայրի» (Cedar) հրթիռաշարքը, հասնելով մթնոլորտի վերին շերտերը եւ գրաւելով ազգային ու միջազգային ուշադրութիւն:

Մտածեցէ՛ք այդ իրագործման խորհրդանիշին մասին: Լիբանան իբրեւ գաղթական հասած մարդոց թռուները հիմա դէպի երկինք կը հասնէին: Այն նոյն համայնքը, որ ատենով պայքարած էր ճահիճներու վրայ հաստատուելու համար, հիմա կը պատրաստէր գիտութեամբ եւ արհեստագիտութեամբ հետաքրքրուած երիտասարդներ: Դանապարհորդութիւնը արտակարգ էր: Գոյատեւումէն դէպի ուսում: Ուսումէն դէպի գիտական հետաքրքրութիւն: Գիտական հետաքրքրութենէն դէպի հրթիռներ: Պուրճ Համուտի ճահիճներէն դէպի Լիբանանի երկինքը:

Դժբախտաբար, հրթիռային ծրագիրը ի վերջոյ դադրեցաւ 1960-ականներու տասնամեակի տագնապներուն, աշխարհաքաղաքական ճնշումներու եւ շրջանային լարուածութեան պատճառով: Բայց անոր նշանակութիւնը չանհետացաւ: Անկկա ցոյց տուաւ, թէ ի՞նչ կրնայ պատահիլ, երբ համայնք մը մերժէ թոյլ տալ, որ դժուարութիւնները սահմանափակեն իր երեւակայութիւնը: Անոնք իրենց հետ բերին ու փաստեցին իրենց տոկունութիւնը:

ԻՆՉՊԵՄ ՔԵՆՏԻՍ ՔԱՐԹԻ-ՈՒՒԼԻԸՄՁ ՍԵՒԱՄՈՐԹՆԵՐՈՒ ԲՐԻՏԱՆԵՐԷՆԸ ԿԸ ԳՈՐԾԱԾԷ ԻՐ ՔԱՐԻՊԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

ՌԻԱՆԱՆԱ ՃԵՅՏ ՓԱՐԲԵՐՈՒ ՀԱՐՅԱՉՐՈՅՈՅ ՔԵՆՏԻՍ ՔԱՐԹԻ-ՈՒՒԼԻԸՄՁ ՀԵՏ, 11 ՅՈՒԼԻՍ 2025

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

Queenie (2019) վեպի հեղինակը կը խօսի իր սեփական ճայնին վերատիրա-նալու, հորաքրոջ յիշատակը յարգելու եւ ճերմակամորթներու գրական աւան-դոյթին չենթարկուելու մասին:

Քարիպեան կողմնորոշումն մէջ իր կատարած առաջին հանրային ընթերցու-մին առիթով բրիտանացի-ճամայքացի հեղինակ Քենտիս Քարթի-Ուիլիըմզ գրողը ունեցաւ Ռիաննա Ճեյտ Փարբըրի հետ ճամայքայի Գալապաշ միջազ-գային գրական փառատօնին՝ յիշողութեան զաղափարին իր մօտեցումին, զգացական լեզուի կարեւորութեան եւ սեւամորթներու բրիտաններէնով գրելու մասին:

Ռիաննա Ճեյտ Փարբըր – Այս տարի Գալա-պաշ փառատօնին քու մասնակցութիւնդ տեղին էր: Ճամայքացի-ամերիկացի դերասանուհի Շերիլ Լի Ռալֆը, որ նոյնպէս հիւր բանախօս էր, բեմէն պատ-շաճօրէն յայտարարեց այդ մասին: Մտիկ ըրինք «Memory as Fiction» խորագրով քու նոր փորձա-գրութեանդ ընթերցումը, ուր կը մեծարէիր հորա-քրոջդ՝ Միլիսենի իմաստութիւնը: Արդէն իսկ յաջո-ղած էիր զինք անմահացնել քու գեղարուեստա-կան ստեղծագործութեանդ մէջ: Ինչպիսի՞ն էր մեծ մասամբ քարիպեանցիներէ բաղկացած լսարանի առջեւ եւ նոյնինքն քարիպեան տարածաշրջանին մէջ գրական աշխարհի ամէնէն բաղձալի հարթակ-ներէն մէկուն վրայ ընթերցելու քու փորձառու-թիւնը:



Քենտիս Քարթի-Ուիլիըմզ – Բաւական բախտատու եղած էի՝ այդ օրը եւ զի-շեր մը առաջ իբրեւ հանդիսատես նախորդ գրողներուն մասնակից ըլլալու:



Ներկաներուն խառնուելով նկա-տեցի, թէ որքան հեզ եւ ընկալունակ էին: Դեռ կը փորձեմ ըմբռնել, թէ որ-քան հագուածուս է իբրեւ քարիպ-եանցի ծնողներէ սերած եւ Միաց-եալ Թագաւորութեան մէջ ապրելու հարկադրուած հեղինակ մը ճա-մայքացիներ տեսնել առջեւս, իսկ ետիս՝ Աթլանթիքը: Ինչ կը վերաբերի հանգուցեալ հորաքրոջս, իմ ապ-րած սգոյ եւ իրեն մասին յիշողու-թիւններու փոխակերպման նուիր-ւած փորձագրութեան ընթերցու-

մին, կը խորհէի, որ հաւանաբար շնչահեղձ ըլլամ, գուցէ չկարենամ շարունա-կել, ու ճայն խեղդողի, ուստի լսարանէն խնդրեցի, որ զիս գօտեպնդելու նպա-տակով որեւէ ճայն չհանեն, նոյնիսկ եթէ այդպիսի բան պատահի: Անոնք սի-րով յարգեցին խնդրանքս եւ ընթերցումէն ետք շատ բարի գտնուեցան ինձի հանդէպ: Անկասկած տան պէս զգացի, ըլլայ ինքս իմ մէջ, ըլլայ իրենց առջեւ:

ՌՃՓ – Քարիպեանցի կամ բրիտանացի ո՞ր սեւամորթ հեղինակները, եթէ կան այդպիսիք, ուղղութիւն տուած են քու ընթերցումներուդ եւ ներշնչած գրու-թիւններդ:

ՔԶՈՒ – Գրելու ատեն կը փորձեմ հեռու մնալ գեղարուեստական գրակա-նութենէ, ուստի ինձի համար մեծ ուրախութիւն է վերադառնալ անոր, երբ բե-մագիրի կամ վեպի մը նախնական տարբերակը յանձնած ըլլամ: Երբ կը գրեմ, ինձի կ'օգնէ գիտակցիլ, որ քարիպեան հարուստ միջավայրին մէջ կը ստեղծա-գործեմ: Չիս տպաւորող գիրքերէն են՝ Ալեքսիս Արթըրգի *How to Love a Ja-maican* պատմութեանը ժողովածուն (2018), որեւէ բան Քուրթիա Նիւլենտէն, բայց մասնաւորաբար *The Scholar*-ը (1997), Լէոն Ռոսէն ինչ որ ձեռքս անցնի, եւ Նիքոլ Տենիս-Պենի *Here Comes the Sun*-ը (2016), որ բոլոր ժամանակներու իմ ամենասիրած վեպերէս մէկն է: Չալիքա Ռեյտ-Պենթայի *Frying Plantain*-ը (2019) նոյնպէս իմ ամենասիրած գիրքերէս է: Սիրած եմ Այաննա Լոյտ Պա-նուտի *When we were Birds*-ը (2022) եւ Պրիեն Միլըրի *The God of Good Looks*-ը (2023): Չէի ուզեր, որ թերագնահատուի Քինկսթոնի Նորման Մեյնի միջազ-գային օղակայանի ճամայքայական գրականութեան բաժինը. իմ ամենասի-րելի գիրքերէս ոմանք քարիպեան անկախ մամուլէն գտած են:

ՌՃՓ – Սեւամորթ բրիտանացիներու գրականութեան մէջ պատմական եւ ժամանակակից ընդհատումներուն պատճառով նուազ ակներեւ կը դառնայ խնդրոյ առարկայ գրականութեան շարունակականութիւնը, մասնաւորաբար երբ զայն կը բաղդատենք ուրիշ մշակոյթներու հետ: 1978-ին Black Ink Collec-tive-ը իր հրատարակչատունը հիմնեց, ինչպէս նաեւ սեւամորթ գրողներու նոր միութիւն մը: Մենք փոլային գործունէութիւն ունեցած ենք, բայց ոչ մէկ տեւա-կան աւանդոյթ: Մինչեւ այսօր չկայ մէկ առանցք, ո՞չ ալ կապող օղակ: Ինչքան կը հասկնամ, այդ բաւական դժուար է: Ինձի կը թուի, թէ ամէն ինչ ծածկագրուած յառաջ կ'երթայ: Այս օրերուն անհատական գրողները կը գերակշռեն, քան հաւաքական միտքը: Մենք՝ որպէս հեղինակ, կը տենչանք նոսրալժի մը, որուն մաս չէինք կազմեր, բայց կը կարծեն, թէ կրնանք զայն նորէն ունենալ, չէ՞: Միշտ կը պատասխանեմ հարցումներու. անձնական գրեցեք ինձի: Ահա թէ ինչու յաճախ հարցում-պատասխան կ'ընեն «Ինսթակրամ»-ի վրայ. որպէսզի մարդիկ ինձի հարցնեն ոլորտին, իմ աշխատանքիս եւ ընթացքին մասին ընդ-հանրապէս:

ՌՃՓ – Այսօր դիւրութեամբ կրնանք զանազանել սեւամորթներու բրիտանե-րէնի մէկ տարբերակը, որ գլխաւորաբար ազդուած է ճամայքայական փաթու-յէն, աւելի ընդարձակ իմաստով՝ քարիպեան քրեով լեզուներէն եւ, վերջին շրջա-նին, Արեւմտեան Աֆրիկէի փիւճըն լեզուներէն: ՍԲ-ն երիտասարդ է եւ կը տար-բերի քաղաքէ-քաղաք: Դուրս ո՞ր լեզուով կը մտածես եւ կը գրես:

ՔԶՈՒ – Հարաւային Լոնտոնի խօսակցական լեզուով: Երանի կարենայի ուրիշ լեզուով մտածել եւ խօսիլ, բայց ես փաթուան ունիմ եւ հարաւային Լոն-տոնի խօսակցական լեզուն: Երբեք պիտի չփորձեմ ուրիշ ձեւով մտածել կամ խօսիլ: Ես այնպիսիներէն չեմ, որ մէկ ժամ կը ծախսէ՝ վարագոյրները նկա-րագրելու համար: Իմ ընկիւրս մարդոց զգացումներուն մէջ դիւրութեամբ բա-փանցելն է, եւ եթէ պէտք ըլլայ՝ այդ զգացումները ապրելով լալ, երբ կը գրեմ:

Իմ իսկապէս կարելոր է ինձի համար: Իմ հիմնական լեզուս, որով կը խօսիմ, զգացումն է:

ՌՃՓ – Ըստ քեզի՝ մշակութադատութեան ո՞ր տեսակը իսկապէս օգտակար է հեղինակին եւ ընթերցողներուն:

ՔԶՈՒ – Հետաքրքրական հարցում է՝ նկատի առնելով Միացեալ Թագա-ւորութիւն հաստատուած բրիտանացի-ճամայքացի հեղինակ ըլլալս: Որովիե-տեւ ո՞չ միայն ես, այլ նաեւ ինձի նմանները միջմշակութային անցումներ կը կատարեն: Բոլորս այդ չէ՞ որ կ'ընենք այս օրերուս: Ես ես կը զգամ, որ պէտք է տարբերութիւն դնենք առցանց մշակոյթի եւ իրական կեանքի մշակոյթին մի-ջեւ: Ինձի համար մշակութադատութիւնը որպէս ամբողջութիւն իր դերը կը կատարէ պարզապէս իր իսկ գոյութեամբ: Ան կը յիշեցնէ, որ ստեղծուած ամէն բան իր տեղն ու նշանակութիւնը ունի եւ կրնայ ու պէտք է մեկնաբանուի ու վերլուծուի տարբեր դիտանկիւններէ, երբ գործը ամբողջացուած ու յանձնուած է քննադատին:

ՌՃՓ – Ի՞նչ կրնան ակնկալել ընթերցողները յաջորդ գիրքէդ:

ՔԶՈՒ – Գրական գործունէութեանս ամբողջ ընթացքին միշտ ուզած եմ գրել,– կամ հաղորդում պատրաստել,– բացառապէս զիս մտահոգող կամ հետաքրքր-րող կեանքի երեւոյթներուն մասին: Երբ շուրջ քսանհինգ տարեկան էի, բացա-յայտեցի, թէ աշխարհը որքան բշտամական կրնայ ըլլալ համատարիք սեւա-մորթ կնոջ մը հանդէպ, մանաւանդ երբ ան կը պայքարի մայրական սիրոյ բա-ցակայութեան առթած հոգեցնցումին դէմ: **Champion** (2023) պատկերասփիւռի յայտագիրս կը քննէր երաժշտութեան ոլորտին մէջ անհասկնալի կնատեսացու-թիւնը եւ շահագործումը, եւ թէ այդ ուժերու փոխազդեցութիւնը ինչպէս կրնայ պառակտուի յառաջացնել ճամայքացի ընտանիքի մէջ: Երկրորդ վեպիս՝ **People Person**-ի մէջ (2022) զգացականօրէն անհաղորդ մայրերու փոխարէն կեդրոնացումս դրի զգացականօրէն անհաղորդ ու ֆիզիքապէս բացակայ հայ-րերու, ինչպէս նաեւ հինգ զաւակներու կեանքին մէջ հօր ձգած դրոշմին վրայ: Հիմա երեսուն տարեկան եմ, եւ այս նոր վեպիս մէջ ներկայացուցած կերպարս մեծցած է այն համոզումով, որ մայրութիւնը գերագոյն նպատակ է, բայց միա-ժամանակ կը բախի այն իրողութեան, որ այդ կրնայ տեղ չունենալ իր ապա-գային մէջ: Եւ անշուշտ այս ամբողջը կը տրուի սեւամորթ կնոջ պրիսմակէն, որ կ'ապրի եւ կ'աշխատի այսօրուան Լոնտոնի մէջ, ուր առաւել քան երբեւէ կը շարունակուի անբարեացակամ վերաբերումը: Այս բոլորին վրայ աւելցուր բժշկական ոլորտին մէջ տիրող ցեղային խտրականութիւնը, եւ ահաւասիկ կ'ունենաս խառնակ իրավիճակ մը: Վստահ եմ, որ յաջորդիս ամուսնութեան թեմային պիտի անդրադառնամ:

Պէյրոմ, 21 Օգոստոս 2026

ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ԴԱՐԱՆԵՐՋԱՆԸ...

(Ծարունակուած 2-րդ էջէն)

արագ, քան մենք յաճախ կարողանում ենք արձագանգել: Թուային տնտե-սութիւնը, արհեստական բանականութիւնը, կենսատեխնոլոգիաները, (ciber security) կիբերանվտանգութիւնը եւ նոր արդիւնաբերական քաղաքականու-թիւնը վերածնաւորում են պետութիւնների մրցունակութեան չափանիշները: Այն երկրները, որոնք ներդրումներ են կատարում գիտութեան, կրթութեան եւ տեխնոլոգիաների մէջ, ապագայում կ'ունենան ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական եւ անվտանգային առաւելութիւններ: Հետեւաբար, Հայաս-տանի ռազմավարական ընտրութիւնը պէտք է հիմնուած լինի երեք սկզբուն-քի վրայ՝

1. ինքնիշխանութեան ամրապնդումը ինստիտուցիոնալ կարողութիւնների միջոցով,

2. արտաքին քաղաքականութեան բազմաւեկտոր եւ պրագմատիկ իրա-կանացումը՝ առանց ինքնախաբէութեան եւ առաւելապաշտութեան,

3. ազգային զարգացման այնպիսի մոդելի ձեւաւորումը, որտեղ մարդկա-յին կապիտալը դառնում է գլխաւոր ռազմավարական ռեսուրս:

Պատմութիւնը բազմիցս ցոյց է տուել, որ փոքր պետութիւնները կարող են յաջողութեան հասնել, եթէ ճիշդ են գնահատում միջազգային միջավայրի փո-փոխութիւնները եւ ժամանակին են վերափոխում իրենց ներքին համակար-գերը: Սինգապուրը, Ֆինլանդիան, Իսրայէլը եւ մի շարք այլ երկրներ իրենց անվտանգութեան եւ զարգացման հիմքում դրեցին ոչ թէ աշխարհագրութիւնը, այլ պետական կառավարման որակը, կրթութիւնը եւ նորարարութիւնը եւ, որ ամենակարեւորն է՝ մարդուն՝ որպէս ապագան կերտող *սուբյեկտի*: Հայաս-տանի համար սա պարզապէս տեսական օրինակ չէ, այլ գործնական ան-հրաժեշտութիւն:

Անորոշութեան դարաշրջանում ամենավտանգաւորը ոչ թէ արտաքին ճնշումն է, այլ ներքին ինտերութիւնը եւ համերաշխութիւնը: Պետութիւնները պարտուի են այն ժամանակ, երբ ուշ են արձագանգում փոփոխութիւններին: Հայաստանը դեռեւս ունի հնարաւորութիւնների պատուհան, սակայն այն անվերջ բաց չի լինելու: Մեր ժամանակի գլխաւոր հարցը հետեւեալն է. կը կարողանա՞նք արդեօք աշխարհաքաղաքական փոփոխութիւնների պայ-մաններում ձեւաւորել ժամանակակից, մրցունակ եւ դիմադրունակ պե-տութիւն, թէ՞ կը շարունակենք ապրել անցեալի պատկերացումներով:

Պատասխանն արդէն միայն արտաքին քաղաքականութեան ոլորտում չէ: Այն գտնուի մեր պետական մտածողութեան, ազգային կազմակերպւա-ծութեան եւ ապագայի նկատմամբ պատասխանատւութեան մէջ: Այսինքն, իսկապէս անհրաժեշտ է աւելի ուշադիր լինել, չափազանց հաշուենկատ, զգոյշ, բայց նաեւ համարձակ, որպէսզի յանկարծ չյայտնուենք փլուզուող նախկին համակարգերի փլատակների տակ: Յստակ պատկերացմանը, որ եթէ պատմութեան ինչ որ պահի գործել է իրաւունքի ուժը, ապա այսօր գործում է միայն ուժի իրաւունքը...

18.08.2026, Երեւան

ՊՈԼՍԱՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԱՊԱԳԱՆ՝ ՀԱՐՑԱԿԱՆՆԻ ՏԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՊԱՔԱԾԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՌԻԱՄԱՆ ՀԱՐՇՈ՛ Պոլսոյ մէջ հրահայտ նոր օրակարգ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՄԱԳՕ ԱՐԵԱՆ

Երբ համայնքի մը դպրոցին դուռը կը բացուի, այդ դուռը միայն կրթութեան դուռը չէ: Պոլսահայ համայնքի ապագային, ինքնութեան եւ շարունակակաւնութեան դուռն է:

Վերջին օրերուն Թուրքիոյ հայկական վարժարաններուն մէջ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու զաւակներու ուսման վերաբերեալ շրջանառուող տեղեկութիւնները բնականաբար մտահոգութիւն ստեղծեցին: Զգայացունց վերնագիրները նոյնիսկ այն տպաւորութիւնը փոխանցեցին, թէ հայկական վարժարաններուն մէջ Հայաստանի քաղաքացի աշակերտներու մուտքը ամբողջութեամբ արգիլուած է:

Սակայն իրականութիւնը աւելի բարդ է:



«Պալքար»-ի համար նուաստիս կատարած ճշգրտումներուն համաձայն՝ այս պահուն խօսքը պաշտօնական «արգելք»ի մը մասին չէ, այլ՝ տարիներէ ի վեր գործադրուող «հիւր աշակերտ»ի կարգավիճակին եւ անոր ապագային մասին:

Պոլսոյ մէջ Հայաստանցի բազմաթիւ ընտանիքներու զաւակներ տարիներ շարունակ հայկական վարժարաններ յաճախած են այս կարգավիճակով: Անոնք դասերուն մասնակցած են, դպրոցական կեանքին մաս կազմած են, սակայն չեն ունեցած այն իրաւական կարգավիճակը, որ կը շնորհուի Թուրքիոյ կրթական համակարգին մէջ պաշտօնապէս արձանագրուած աշակերտներուն:

Այսօր, երբ վարժարաններ այցելող տեսուչները սկսած են հարցումներ ուղղել Հայաստանի քաղաքացի աշակերտներու մասին, հարցը նոր զգայնութիւն ստացած է:

Հաւանաբար այս փուլին պէտք չէ ըսել, թէ «Հայաստանցի աշակերտներուն հայկական դպրոցները փակուեցան»: Աւելի ճիշդ հարցումը սա է՝ պիտի շարունակուի՞ այն դրութիւնը, որ շուրջ տասնըշրս տարիներ հնարաւոր դարձուցած է Հայաստանի քաղաքացիներու զաւակներուն ուսումը համայնքային վարժարաններուն մէջ:

Այս հարցին պատասխանը տակաւին վերջնական չէ:

Ի՞նչ է իրականութիւնը. Կարծիքներ «ղէպքի» վայրէ՛

Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներու զաւակներու հայկական վարժարաններուն մէջ ուսումը ներկայիս պաշտօնապէս արգիլուած չէ: Խնդիրը անոնց արձանագրութեան իրաւական կարգավիճակն է:



Սուրիոյ ներքին պատերազմէն ետք Թուրքիա ապաստանած ընտանիքներու զաւակներուն համար ստեղծուած էր կրթական համակարգին մէջ արձանագրուելու յատուկ կարելիութիւն: Հայաստանի քաղաքացիներու պարագային նման արտօնութիւն մը գոյութիւն չունի:

Այդուհանդերձ, տարիներ շարունակ Հայաստանի քաղաքացիներու զաւակներ ընդունուած են հայկական վարժարաններ՝ «հիւր աշակերտ»ի կարգավիճակով:

Այս կարգավիճակով անոնք կրնան հետեւիլ դասերուն, մասնակցիլ դպրոցական ձեռնարկներուն եւ ըլլալ իրենց թրքահայ հասակակիցներուն դասընկերները, սակայն չեն ստանար սովորական վիճակացոյց կամ ընթացաւարտութեան պաշտօնական վկայական:Այս գործելաձեւը նորութիւն չէ: Ան շուրջ տասնըշրս տարիէ ի վեր գոյութիւն ունի:

Հարցը նոր թափ ստացած է վերջին շրջանին, երբ վարժարաններ այցելած կրթական տեսուչներ հանդիպումներու ընթացքին տեղեկութիւններ պահանջած են Հայաստանի քաղաքացի աշակերտներու մասին, ինչպէս նաեւ հարցումներ ուղղած են նախորդ տարիներուն «հիւր աշակերտ» եղածներու ներկայ վիճակին մասին:

Այս զարգացումները մտահոգութիւն ստեղծած են, սակայն պաշտօնական վերջնական որոշում մը տակաւին հրապարակուած չէ:

Հարցը յառաջիկայ շաբաթ պիտի քննարկուի Հայկական Վագըֆներու (Վագըֆ՝ համայնքային կառոյց մարմիններ (Ս. Ա.) Միութեան՝ ԷՐՎԱՊ-ի ժողովին ընթացքին: Նիւթին մասին տեղեկացուած է նաեւ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը:

Մինչ այդ՝ պէտք է սպասել քննարկումներուն եւ յաջորդող պարզաբանումներուն:

Այս նիւթին շուրջ աւելի ամբողջական պատկեր մը կազմելու նպատակով յաջողեցայ կապ հաստատել Պոլսահայ համայնքի երկու գործիչներու հետ, որոնք իրենց համայնքային գործունէութեան կողքին նաեւ կը խմբագրեն Պոլսոյ երկու հիմնական պարբերականները:

Ստորեւ, հերթաբար, կը ներկայացնեմ Պոլսոյ «Ժամանակ» պարբերականի գլխաւոր խմբագիր Արա Գոչունեանի, ապա «Ակօս»ի հայկական էջերու գլխաւոր խմբագիր Բագրատ Էտրոզեանի տեսակէտները՝ նշեալ հարցին շուրջ:

Արա Գոչունեան. «Հիւր աշակերտ»ներու հարցը՝ օրակարգի վրայ

Պոլսոյ «Ժամանակ» օրաբերքի գլխաւոր խմբագիր՝ Արա Գոչունեանի համաձայն՝ Հայաստանէն Թուրքիա հաստատուած ընտանիքներու դպրոցահասակ երեխաներու կրթութեան հարցը թրքահայ համայնքէն ներս ներկայիս կը լուծուի երկու տարբեր ձեւերով: Ըստ անոր Իսթանպուլի մէջ գոյութիւն ունի «Հրանդ Տինք» դըպրոցը, որ Թուրքիոյ Հանրապետութեան կողմէ պաշտօնական դպրոցական կարգավիճակ չունի, սակայն այնտեղ ամբողջութեամբ Հայաստանի կրթական ծրագիրը կը գործադրուի: Աշակերտները մինչեւ ութերորդ դասարան կ'ուսանին եւ ապա համապատասխան քննութիւն տալով, իրենց ուսումնառութիւնը կրնան շարունակել Հայաստանի մէջ:Սակայն վերջին տարիներուն այս դպրոցի աշակերտութեան թիւը զգալիօրէն նուազած է:

Գոչունեան «Հրանդ Տինք»ի անուան Հայաստանացիներու յատուկ դպրոցին մէջ թիւի նուազումը առաջին հերթին կը կապէ Թուրքիոյ տնտեսական ծանր պայմաններուն հետ: Տարադրամի արժէքի փոփոխութիւնները, կեանքի եւ ապրուստի սղութիւնը պատճառ դարձած են, որ Հայաստանէն արտագաղթած ընտանիքներու մէկ մասը վերադառնայ Հայաստան:Այս կացութեան կողքին, սակայն, յառաջացած է նաեւ ուրիշ խնդիր մը:Թրքահայ համայնքը ունի իր փոքրամասնութեան վարժարաններու ցանցը, որ ներկայիս մօտաւորապէս 3000 աշակերտ ունի: Վերջին հինգ-վեց տարիներուն այդ վարժարաններուն մէջ սկսած են ընդունուիլ նաեւ Հայաստանէն արտագաղթած ընտանիքներու զաւակները:Բայց անոնք ընդունուած են «հիւր աշակերտ»ի կարգավիճակով:

Անոնք կը մասնակցին բոլոր դասերուն, դպրոցական ձեռնարկներուն եւ մշակութային կեանքին, սակայն չեն ստանար պաշտօնական վկայական: Արդիւնքը այն է, որ երբ վերադառնան Հայաստան, իրենց կրթութիւնը շարունակելու ընթացքին կրնան դժուարութիւններու հանդիպիլ, որովհետեւ համայնքային վարժարաններու ծրագիրը Հայաստանի կրթական ծրագիրը չէ:

Գոչունեան կը նշէ նաեւ, որ այս խնդիրին լուծման ուղղութեամբ աշխատանքներ կը տարուին Պատրիարքարանի եւ Հայաստանի Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնամարզի նախարարութեան միջոցաւ: Սակայն թրքահայ վարժարաններու փաստաթուղթերու ճանաչման հարցը բարդ է՝ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու բացակայութեան պատճառով:

Այս պայմաններուն մէջ, ըստ Գոչունեանի, վերջին շրջանին նոր զարգացում մը տեղի ունեցած է: Թրքահայ վարժարաններու մէջ «հիւր աշակերտ»ներու ընդունելութիւնը մինչեւ հիմա գործնականօրէն կարելի եղած էր Թուրքիոյ կրթութեան նախարարութեան համաձայնութեամբ: Այժմ, սակայն, նախարարութիւնը վարժարաններու ղեկավարութիւններէն կը պահանջէ այլեւս չընդունիլ այդ կարգավիճակով աշակերտները:Այս կացութիւնը, անշուշտ, անսպասելի է 2026-2027 կրթական տարեշրջանի նախաշեմին: Գոչունեան կը նշէ, որ համայնքային վարժարաններու պատասխանատուները արդէն իսկ պատկան իշխանութիւններուն հետ բանակցութիւններու մէջ են հայկական դպրոցներու առաքելութեան վերաբերող այլ կարեւոր հարցերու շուրջ:

Միւս կողմէ Գոչունեան կը նշէ, որ կան որոշակի դրական զարգացումներ: Այդ առումով ան կը յայտնէ, որ քանի մը շաբաթ առաջ Թուրքիոյ կրթութեան

ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ԳԱԼՖԱՅԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 160-ԱՄԵԱԿԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

Ահաասիկ յոբելեան մը եւս, այս անգամ՝ ի Պոլիս, Վոսփորի ափունքին։ Պոլսոյ Հայ Քոյրերու Գալֆայեան Միաբանութեան ու համանուն վարժարանի հիմնադրութեան 160-ամեակը։

Մտովին բռնիք մը կատարենք դէպի երբեմնի հայաշատ Սկիւտար թաղամասը ու կանգ առնենք նախկին Սեմերճեան ճեմարանի պատմական շէնքին առջեւ։ 2000 թուականէն ի վեր այս շէնքն է որ գիրկ բացած է Գալֆայեան (պոլսեցիները կը գրեն **Գալֆաեան**, առանց «յի»-ի) վարժարանին, որ անցեալին, իբրեւ աղջկանց գիշերօթիկ որբանոց, երկա՛ր տասնամեակներ գործած էր Խասգիւղ թաղամասին մէջ։

Ոմանք հարց կրնան տալ հիմա.

-- Հայ միանձնուհիներու միաբանութի՞ն ունինք Պոլսոյ մէջ...։

Այո՛, եւ թէ՛ 160 տարիէ ի վեր...։



Մայր Սրբուհի Գալֆայեան

Պէտք է նաւարկենք դէպի անցեալ, մինչեւ ԺԹ. դարու կէսերը, երբ կրօնական ու մարդասիրական ապրումներով սնած հայուհի մը՝ **Սրբուհի Գալֆայեան**, Պոլսոյ մէջ կը հիմնէր հայ կրօնաւորուհիներու եզակի միաբանութիւն մը ու միաժամանակ կեանքի կը կոչէր Գալֆայեան աղջկանց որբանոցը, աւելի ծանօթ՝ «**Գալֆայեան Տուն**» անունով, որ յետոյ պիտի փոխակերպուէր կանոնաւոր դպրոցի ու այսօր մեզի ներկայանար որպէս մէկը իսթանպուլահայութեան 15 կրթօճախներէն...։

Ուստի, քիչ մը պատմութիւն։

1840-ին, խոնարհ դասակարգէ եկող 18 տարեկան դեռատի ու գրեթէ անուս երիտասարդուհի մը՝ Սրբուհի Գալֆայեան, բալուցի ընտանիքի զաւակ, կրօնական կոչում մը զգաց իր ներսիցին եւ հրաժարելով աշխարհիկ կեանքէ՝ Պոլսոյ մէջ մայրապետական քողով ծածկեց իր գոլիւթը...։ Ան իր շուրջ հաւաքեց երկու տասնեակի չափ որբուհիներ, վարձեց աղքատիկ տուն մը ու այնտեղ լծուեցաւ անբախտ աղջնակներու խնամքին ու դաստիարակութեան։

Սրբուհի միանձնուհին հետեւողականօրէն մղեց իր սանուհիները ոսկեթել ասեղնագործութեան արուեստին («օյա» եւ «տիվալ»), որպէսզի կարենան իրենց կեանքը շահիլ հետագային։ Իր աշխատանքները գնահատուեցան համայնքին կողմէ։ Շատ-շատեր օժանդակեցին իրեն, ինչպէս՝ գրագիտուհի Սրբուհի Տիսաբը։

Տարիներ անց, 1866-ին, Կ. Պոլսոյ ազգ. պատրիարքարանը միաբանական հաստատութեան մը վերածեց Սրբուհի մայրապետի այս ուխտը եւ զայն վաւերացուց պաշտօնապէս։ Ս. Էջմիածնայ Ամենայն Հայոց հայրապետն ալ կոնդակով մը հաստատեց զայն։ Աւելի ուշ գրի առնուեցաւ միաբանութեան կանոնագրութիւնն ալ։ Այսպէս, ծնունդ առաւ **Հայ Քոյրերու Գալֆայեան Միաբանութիւնը**, որ Հայ Առաք. Եկեղեցւոյ ենթակայ եզակի ուխտ մը դարձաւ։

Սրբուհի մայրապետ հետզհետէ ամրացուց հիմները իր միաբանութեան ու որբանոցին։ Տեղւոյն վրայ հաստատեց ուսումնարան մըն ալ (1886), որ կառավարուեցաւ հայկաբան Ռեթէոս Թադէոսեանի տեսչութեամբ։ Առիթով մը, 1870-ին, մայրապետը իր որբուհիներով յաջողեցաւ ներկայանալ մինչեւ իսկ Սուլթան Ապտիւլ Ազիզ կայսեր ու անկէ ստացաւ պետական որոշ յատկացումներ իր որբախնամ առաքելութեան ի նպաստ։ Յաջորդ տարի ան կրցաւ գնել հայ ամիրայի մը պատկանող ընդարձակ ու ներկայանալի ապարանք մը Խասգիւղի մէջ ու իր հիմնարկը դարձուց աւելի հաստատուն, մանաւանդ որ, իբրեւ բարեփրական օճախ, յաջողեցաւ զայն արձանագրել որպէս ամէն տեսակ տուրքէ զերծ կառոյց։ Սուլթան Ապտիւլ Համիտ Բ.-ի շրջանին եւս ան կայսերական նուիրատուութիւն եւ առանձնաշնորհումներ ստացաւ իր որբանոցին համար (հացի ու միսի առօրեայ մատակարարում, որ կը կազմէր հաստատութեան պիտոճէին մէկ չորրորդը)։

Սրբուհի մայրապետ վախճանեցաւ 1889-ին, 67 տարեկանին (իր կենսագրութիւնը գրի առած ու առանձին գիրքով մը հրատարակած է Գրիգոր Մարգարեան, 1892-ին, Պոլիս)։ Գալֆայեան Տուն կանթեղը չմարեցաւ սակայն, ուրովիէտեւ անմիջապէս ողբացեալին յաջորդեց իր ձեռնասուններէն **մայր Երանուհի Յովհաննէսեանը** (1889-1902)։ Այս շրջանին, Օրմանեան Մաղաքիա պատրիարքի խելացի միջամտութեամբ, հաստատութիւնը մտաւ ուղղակի ազգ. պատրիարքարանի հովանիին տակ ու անոր վարչական վերահսկողութիւնը յանձնուեցաւ մասնաւոր խնամակալութեան մը (այդպէս է առ այսօր)։ Համայնքային հաստատութիւններու շարքին մէջ Գալֆայեանը միշտ ալ պահեց իւրայատուկ դիրք մը, որովիէտեւ ան մէկ կողմէ շարունակ վայելեց ժողովրդային խոնարհ դասակարգի համակրանքը, իսկ միւս կողմէ՝ իր գլխուն վրայէն անպակաս զգաց «էլիք» դասակարգի գուրգուրանքը...։

Տաք ու պաղ օրեր շա՛տ տեսաւ Գալֆայեան որբանոցը։ 1896 Օգոստոսի Պոլսոյ ջարդի օրերուն անոր պատերէն ներս ապաստան փնտռեցին շուրջ 300 սարսափահար խասգիւղցիներ, իսկ Մեծ Եղեռնի տարիներուն անիկա մնայուն պատսպարան դարձաւ շուրջ հարիւր որբուհիներու։ Բ. Աշխարհամարտի օրերու «Ունեւորութեան տուրք»-ը եւս ժխտական ազդեցութիւն ունեցաւ որբանոցին վրայ, քանի որ համայնքին ունեւոր դասակարգը ստիպուեցաւ ակամայ դադրեցնել իր հերթական առատաձեռն նուէրները...։

Ամփոփելով ըսենք, որ յաջորդ տասնամեակներուն, միաբանութեան ու որ-

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ (sharoyanlevon@gmail.com)

բանոցին գլուխը անցան հետեւեալ կրօնաւորուհիները. **Քրիստինէ մայրապետ Փափազեան** (1902-1919, բնիկ էտիրնեցի, Ս. Փրկիչ ազգ. հիւանդանոցի նախկին հիւանդապահուհի), **Աղանի մայրապետ Քէօւէեան** (1919-1955,



Գալֆայեան Միաբանութեան քոյրեր իրենց մեծաւորուհիին՝ մայր Աղանի Քէօւէեանի շուրջ։

բնիկ արաբկիրցի), **Մարիամ մայրապետ Քէօւէեան** (1955-1970, նախորդ մեծաւորուհիին քոյրը), **Արուսեակ մայրապետ Մխիթարեան** (նախկին որբուհի, 1971-1982)։ Առաւել եւս, միաբանութեան անդամուհիներէն **քոյր Չարմուհի Մեհրապեան** (նախկին որբուհի, դերջանցի ընտանիքի զաւակ, քոյրն էր Պուէնոս Այրէս պաշտօնավարող Տ. Շաւարշ քինյ. Մեհրապեանի), **քոյր Ներիկ Բասմանեան** (նախկին որբուհի, բնիկ սամսոնցի, 1881-1952), **քոյր Գոհարիկ Սկրտիչեան** (Պէլյուքի Հ.Բ.Ը.Մ.-ի Դարուհի Յակոբեան վարժարանէն։ 70-ականներուն վարեց տնօրէնութիւնը Գալֆայեանի) եւ **մայր Հռիփսիմէ Սասունեան** (ծնեալ 1928-ին, Մուսա լեռան Եօղումօլուք գիւղը, արմատներով՝ սասունցի), բոլորն ալ ձեռնադրեալ սարկաւագուհիներ, աշխատեցան ու գործեցին Գալֆայեանի երդիքին տակ երկա՛ր տարիներ։

Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումէն (1923) ետք, Գալֆայեան Տունը, նոր օրէնքներու հիմամբ, անցաւ Կրթական Նախարարութեան հակակշռին տակ ու պաշտօնապէս սկսաւ կոչուիլ «Գալֆայեան գիշերօթիկ նախակրթարան», ունենալով հայ աշխարհական տնօրէններ, որոնք սերտօրէն կը գործակցէին մայրապետերուն հետ։



Խասգիւղի Գալֆայեան Տունը իր յարակից մատուռով (հիմնովին փլցուած 1970-ականներուն)։

1970-ականներուն Գալֆայեան Տունը լուրջ դժուարութեանց դէմ-յանդիման եկաւ։ Ոսկեղջիւրի նոր կամուրջին եւ յարակից պողոտաներու շինութեան բերումով՝ Խասգիւղ-Հալլըճըօղլուի Գալֆայեան որբանոցն ու անոր կից մատուռը ապաստիականացուեցաւ պետութեան կողմէ ու փլցուեցաւ 1972-ին... (այդ շրջանին, միեւնոյն պատճառով, փլցուեցան նաեւ Խասգիւղի հայոց Ս. Ստեփանոս եկեղեցին եւ Ներսէսեան վարժարանը)։ Երկարատեւ թափառումներէ ետք է միայն՝ որ Գալֆայեան Տունը, ինչպէս ըսինք, հանգրուանեց Սկիւտարի մէջ, ուր կը շարունակէ իր գոյութիւնը որպէս նախակրթարան, առ այսօր։

1970-ական եւ 80-ական թուականներուն ծանր ու վիատեցուցիչ նոր օրէնքներ ալ պարտադրուեցան Գալֆայեանին։ Չորօրինակ, միաբանութեան մեծաւորուհիին եւ քոյրերուն արգիլուեցաւ սեփական հաստատութեան մէջ բնակութիւն հաստատել, երբեմն մինչեւ իսկ՝ անոր շենքէն ներս ոտք դնել...։

Գալֆայեան Տան մասին, իբրեւ գրաւոր աղբիւր, կան հրատարակուած երեք գիրքեր։ Ատոնցմէ առաջինը տպուած է հաստատութեան 60-ամեակին առթիւ (1926), երկրորդը՝ 1935-ին, իսկ երրորդը, որ ամէնէն ընդգրկունն է, 100-ամեակի հրատարակութիւնն է (1966, 300 էջանի, աշխատասիրութեամբ Յակոբ Չինարի ու Պերճ Էրզիեանի)։


ԵՐԵՄԻԱ ՔԵՕՄԻՒՐՃԵԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՒ ԵՐԿԸ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ» ին

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՀԱՏԵԱՆ

17-րդ դարու հայ մշակոյթի ականաւոր դէմքերէն է Երեմիա Քեօմիւրճեանը, որ բազմակողմանի զարգացումով ազգային գործիչ եղած է, մատենագիր ու բանաստեղծ: Անոր կեանքին եւ գործերուն մասին Ժ. Մ. Աւետիսեան աշխատութիւն մը կատարած է, որ հրատարակուած է “Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն Համառօտ Դ-Ճ (400) Տարուոյ Օսմանցոց Թագաւորացն» խորագիրով, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1982, 416 էջ: Գիրքին պատասխանատու խմբագիրն է բանասիրական գիտութիւններու թեկնածու Պ. Մ. Խաչատրեան:

Երեմիա Քեօմիւրճեան իր ժամանակակիցներու կողմէ ճանչցուած է իբրեւ հեղինակութիւն եւ ազդեցութիւն ունեցող մտաւորական մը, կ'ըսէ հայ ականաւոր պատմաբան, քերականագէտ, աստուածաբան, հայ կաթողիկ համայնքի Պատրիարքի առաջնորդ (1769 թ.) Սիքայէլ (Կարապետ) Աբրահամ Չամչեան (1738-1823):



Երեմիա Քեօմիւրճեան ծնած է Կ. Պոլիս 1637-ին: Ան եղած է սարկաւագ, սակայն ընդվզելով կղերականներու վարմունքին դէմ, հեռացած է եկեղեցական կեանքէն ու դարձած աշխարհիկ: Ան տիրապետած է յունարէն, լատիներէն, պարսկերէն, արաբերէն, քրքերէն, եփրայերէն, ֆրանսերէն ու գերմաներէն լեզուներուն: Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարք Մարտիրոս Խրիմեցիի եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Եղիազար Այնթապցիի հետ առիթներով մեկնած է Ատրիանապոլիս եւ Պուրսա: Գտնուած է Պէյրութ, Անտիոք եւ Արմաշ քաղաքները: Սերտ կապեր հաստատած է Եւրոպական երկիրներու դեսպաններու հետ եւ նոյնիսկ անոնցմէ ոմանց պատւերով կատարած է ուսումնասիրութիւններ: Կ. Պոլսոյ մէջ հիմնած է տպարան մը, ուր տպած է երկու փոքրածաւալ գրքոյկներ՝ «Տեղեաց Տճօրիմաց» եւ Ներսէս Շնորհալիի «Յիսուս Որդի» գործերը: Հայերէնէ քրքերէնի թարգմանած է Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն»ը եւ Ալեքսանդր Մակեդոնացիի պատմութիւնը: Հասարակական գործունէութեան ծաւալած է 1660-էն 1680: 1691-ին Գերմանիոյ դեսպան Լուդովիկօ Ֆերնանտօ Մարսիլի պատուէրով պատրաստած է «Ա—ԺԷ Դարերու Հայկական Սրբավայրեր, Եկեղեցիներ Ու Վանքեր» մեծածաւալ քարտէզը, որ 2000 թուականին հրատարակուած է (Համացանցային Կայքէջ. - <https://hy.wikipedia.org/wiki/Երեմիա>) :

Կ. Պոլսոյ Պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանեան (1841-1918) Երեմիա Քեօմիւրճեանի հաւատքին եւ ազգասիրութեան մասին հետեւեալը կ'ըսէ. «Անկեղծ ու հաւատարիմ հայադաւան, երբեք բան մը չէ գոհած ազգային եկեղեցւոյ ինքնութենէն եւ յատկութիւններէն, բայց եւ եւրոպական զարգացման եւ առաւելութեանց տեղեակ, հակառակ եղած չէ անոնցմէ օգտուելու եւ միջասահման ընթացք ու գործունէութիւն մը ունեցած է, ծայրայեղութիւններէ խորշելով, ոչ հռոմէադաւանութեան յարելով եւ ոչ հայադաւանութենէ հեռանալով» (էջ 7):

Ժ. Մ. Աւետիսեան յոյժ կարեւոր կը նկատէ Երեմիա Քեօմիւրճեանի ազգային գրական ու պատմագիտական ներդրումը հայ մշակոյթին մէջ. «Դարասկիզբից (19-րդ դար- Յ. Ի.) Քեօմիւրճեանի կեանքի ու գրական ժառանգութեան մասին գրուել են արժէքատու ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, որոնք ունեցել են գլխաւորապէս բանասիրական բնոյթ, թէ նոյնիսկ պատմագիտական աշխատութիւններում, Քեօմիւրճեանը յիշատակուել է, ապա դա կապուած է եղել այն բանի հետ, որ դրանցում քննութեան է առնուել արեւմտահայութեան հասարակական-քաղաքական վիճակը, եւ հնարաւոր չէր շրջանցել Քեօմիւրճեանին: Լոյս են տեսել նրա շատ ու շատ երկերը, բայց դեռես անտիպ են մնում այնպիսի գործեր, որոնք ունեն ճանաչողական սկզբնաղբիւրային արժէք» (էջ 10): Արժանի է յիշել ինչ որ Երեմիա Քեօմիւրճեանի գործերէն «Ստամպուլոյ Պատմութիւն» երկը, Հ. Անդրէասեանը քրքերէն թարգմանած է, որ լոյս տեսած է Պոլիս, 1952-ին, Eremya Celebi Komurcuyan, «Istanbul Tarihi», Istanbul, 1952 (էջ 9) :

Քեօմիւրճեաններու Դարանաղիէն (Դարանաղի, գաւառ Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհում: Համապատասխանում է ուշ ժամանակների Կամախիին (Քեմախ): Յայտնի էր իր արգաւանդ հողերով և հանքային ջրերով: Իսկ Կամախի մասին, Կամախ (Քեմախ, քրդ.՝ Kemax, թուրքերեն՝ Dörttaş), գիւղ Արևմտեան Հայաստանում, Բիթլիսի վիլայեթի Բիթլիսի գաւառում, Դատուանի գիւղախմբում: Գտնուում էր Բաղէշ քաղաքից 8 քմ հիւսիս-արեւելք՝ Ռահովա լեռան սարահարթում, Մուշ տանող ճանապարհից աջ՝ բլուրներով պատւած գոգավորութիւնում.- Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան) եկած ըլլալու մասին գրուած է Կ. Պոլիս ընդօրինակուած Յայսմատուրքի Սարգիս Գրիչի յիշատակարանին մէջ: Երեմիայի հայրը Կ. Պոլսոյ Ս. Սարգիս եկեղեցւոյ Մարտիրոս քահանան էր, որ ազնիւ ու հեղինակաւոր մարդ մը եղած է: Երեմիա Քեօմիւրճեանը Ս. Սարգիս եկեղեցւոյ այլ քահանայ Տէր Յովհաննէսին աշակերտած է: Ան ուսանած է Մուրք Գրոց Պատմութիւն, գրչական արուեստ՝ գեղանկարչութիւն եւ եկեղեցական երաժշտութիւն: 23 տարեկանին սկսած է պաշտօնավարել Կ. Պոլսոյ Առաջնորդարանին մէջ իբրեւ քարտուղար: 1685-ին մեկնած է Էջմիածին, ուր մնացած է մէկ տարի եւ քրքերէնի թարգմանած համառօտ Յայսմատուրքը, նուիրելով զայն իր որդւոյն Գրիգորիս վարդապետին: Ան ամուսնացած է 17 տարեկանին եւ հայր դարձած է չորս առու զաւակներու:

Երեմիա Քեօմիւրճեանի «Պատմութիւն Համառօտ Դ-Ճ Տարուոյ Օսմանցոց Թագաւորացն» տաղաչափեալ գործին մասին խօսելով Աւետիսեան կ'ըսէ.

«Երկի լեզուն գրաբար է: Սակայն օտար (թրքերէն) բառերն առատ են, յատկապէս այն մասերում, որոնք գրուած են թրքալեզու պատմական սկզբնաղբիւրների օգտագործմամբ: Լեզուն համեմատաբար մաքուր է օտար բառերից այն հատուածներում, որտեղ հեղինակը ինքնուրոյն է գրառում տեսածն ու լսածը: Երկը ընդգրկում է չորս հարիւր տարուան, այլ կերպ, օսմանեան 19 սուլթանների իշխանութեան ժամանակաշրջանների պատմութիւնը» (էջ 24): Աշխատասիրողը ինչ կը յիշէ այդ 19 սուլթաններու անունները ժամանակաշրջան կարգով եւ թուականներով:

Այս գործին մէջ յաճախ կը հանդիպինք տեղեկագրութիւններու, ուր յիշուած են հայկական, յունական եւ ասորական եկեղեցիներու եւ վանքերու բռնագրաւումն ու մզկիթի վերածուիլը, ինչպէս նաեւ հայկական շինութիւններու եւ քաղաքներու վերափոխութիւնը թրքականի: Թուրքերու մօտ բնաւ չի յիշուիր այդ նենգ արարքներուն առնչուող այն իրողութիւնը՝ թէ թուրքերն ու քիւրտերը զանոնք կը վերագրեն իրենց ոյժի գօրութեան եւ այդ մէկը յաղթանակ կը սեպեն: Երեմիա Քեօմիւրճեանի գրութիւններէն քաղելով տեղեկութիւնները, Աւետիսեան կ'ըսէ. «Քրիստոնէական շինութիւնների ու քաղաքների վերափոխման փաստերի մասին խօսում են գրեթէ բոլոր թուրքական աղբիւրները՝ որպէս յաղթանակի վկայութիւն: Ըստ Աշըք պատմիչին Օրխանի առաջին գործն է եղել Իզմիթիը (կամ Իզմիթը, պատմական անուանումը՝ Նիկոմեդիա, Թուրքիայի հիւսիս-արեւմուտքում գտնուող կարեւորագոյն արդիւնաբերական եւ նաւահանգստային քաղաք - Համացանցային Կայքէջ. - <https://www.google.com/search/>) մշտական բնակութեան վայր դարձնել: Նա իր աւագ որդու՝ Սոլէյմանի հետ գալիս է այնտեղ, եկեղեցիները փոխում մեջիղների (արաբերէն մեսհիտ որ կը նշանակէ մզկիթ – Յ. Ի.) եւ իր ձեռքով վառում է նրանց զիշերային լոյսերը: Պատմաբան Լուիֆին շեշտում է եկեղեցիների քանդումը: Քեօմիւրճեանը նոյնպէս շեշտում է այդ՝ «քանդէ գեկեղեցիս»: Երկուսն էլ չեն ընդարձակուում մանրամասնութիւնների մէջ, պատմում են որոշակի եղելութիւնը (էջ 30): Աւետիսեան հարցերու պարզաբանման ընթացքին մէջ բացի Քեօմիւրճեանէն կը յիշէ այլ աղբիւրներ, քաղղատելով զանոնք իրար հետ եւ մէջբերելով յիշուած գաղափարները, տեղանունները, անձնանուններն ու նիւթին հետ առնչութիւն ունեցող զանազան ազդակներ:

Երեմիա Քեօմիւրճեանի ներկայացուցած առատ նիւթերու եւ նկարագրութեանց մէջ յստակօրէն նկատառելի է Օսմանեան Պետութեան կիրառած բռնութիւններու եւ վայրագութիւններու յիշատակումը: Յանցագործներն ու յանցագործ նկատւած անմեղներ խիստ տառապալի մահով կը վճարեն իրենց վզին պարտքը: Թուրքին բնագոյային վայրենի բնոյթը չի խնայեր նոյնիսկ թուրք նախարարներու, փաշաներու, պէյերու եւ աղաներու կեանքը:


Ուշագրաւ է Երեմիա Քեօմիւրճեանի բացի պատմական աղբիւրներու վկայակոչումէն, նաեւ ականատես վկաներէ լսածներն ու տեսածները, երբ ան կ'ըսէ.

«Ականատեսք մեզ պատմեցին, որք ի գալլոցն հազիւ ապրեալ: Չապիս եւ զխոցուածքն մեզ ցուցին, թէ յապրելոյ գալլոց մնացեալ»: (1670-1671-րդ տող, էջ 41):

Երեմիա Քեօմիւրճեան կը խօսի նաեւ մարդու ձեռքով կատարուած գալիք ոճիրներու եւ աղէտներու մասին իբրեւ նախագոյութիւն կամ գուշակութիւն: Բնութեան աղէտները՝ հրդեհ, ջուրի ողողում, երկրաշարժ եւայլն այն ատեն կը նկատուէին իբրեւ զգուշացում գալիք մարդու ձեռքով կատարուելիք պատերազմներու եւ սպանդներու: Ան կ'ըսէ թէ հայ բնակչութեան պատահած սպանդները ժողովուրդին մեղքերուն արդիւնքը չէին, այլ հետեւանք թուրք-պարսկական պատերազմներու եւ ուղղակի արդիւնք վայրագ ճելալիներու չարագործութիւններուն (էջ 44):

Թրքական ցեղերը, սելճուգ, մոնկոլ, թիւրքմէն եւայլն Կեդրոնական Ասիայէն գալով եւ գրաւելով Բիւզանդիոնն ու Հայաստանը, չբաւականացան այդքանով այլ յաւելեալ յարձակումներ շոքայագրելով ատեն մը գրաւեցին Յունաստանն ու Իտալիոյ կարգ մը քաղաքները: Անոնք հասան մինչեւ Լեհաստան եւ Ուքրանիա, ուր քրիստոնէաներու ջարդեր գործադրեցին: Ասոր մասին մէջբերելով Քեօմիւրճեանէն, Աւետիսեան կ'ըսէ. «Թուրքերը իրենց սովորութեան համաձայն, տեղահան են անում քաղաքի բնակչութիւնը (ԸգՌուսս եւ զՀայս եւ ԸզՀրեայս ուր եւ եգիտ ռայս առեալ») եւ քշում գերութեան» (էջ 48):

Երեմիա Քեօմիւրճեանի հայոց հետ առնչուող միջնադարի պատմական դէպքեր ներկայացնող գրաբառ այս քերթողագիրքը, կարեւոր ժամանակաշրջանի մը վաւերագրութիւնն է, որ իբրեւ սկզբնաղբիւր կը ծառայէ այդ ժամանակին համար, որ քիչ ուսումնասիրուած ըլլալով կրկնակի կարեւորութիւն կը զգենու:



Օսմանեան Պետութիւնը 17-րդ Դարու Վերջերը

«ԶՈՒԱՐԹՆՈՅ»-ու ՃԱՌԱԳՈՂ ԼՈՅՍԸ՝ ՍՓԻՒՌԻ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի հովանու ներքոյ գործող բազմաթիւ կրթական, բարեսիրական եւ մշակութային կառոյցներ տասնամեակներ շարունակ իրենց նպաստն են բերում ազգային ու եկեղեցական կեանքի զօրացմանը: Դրանց շարքում առանձնապատուկ տեղ ունի «Զուարթնոց» մշակութային միութիւնը, որը հիմնադրուել է 2011 թուականի յուլիսին՝ համայնքում ճանաչւած ու յարգուած բժիշկ եւ մտաւորական դոկտ. Սիմոն Սիմոնեանի նախաձեռնութեամբ ու գլխավորութեամբ:



Միութեան ստեղծման հիմքում դրուած գաղափարը նոր չէր հայ իրականութեան համար: Այն իր ակունքներով հասնում էր Մերձատր Արեւելքի հայկական գաղթօջախներում ձեւաւորուած մի գեղեցիկ աւանդոյթի: Հայոց ցեղասպանութիւնից յետոյ հայրենագրկուած եւ աշխարհով մէկ սփռուած հայութիւնը շատ արագ գիտակցեց, որ օտար միջավայրում ազգային դիմագիծը պահպանելու կարեւորագոյն գրաւականներից են եկեղեցին, դպրոցը, լեզուն եւ մշակութային կեանքը: Այդ անհրաժեշտութիւնից ծնուեցին բազմաթիւ ակումբներ ու միութիւններ, որոնք Հայոց Եկեղեցու եւ ազգային կառոյցների կողքին դարձան տարագիր ժողովրդի համախմբման օջախներ: Դրանք այն վայրերն էին, որտեղ հայը ոչ միայն հանդիպում էր հային, այլեւ վերագտնում էր իրեն՝ մայրենի խօսքի, երգի, գրականութեան, պարի ու աւանդոյթի միջոցով:

Հէնց այդ ժառանգութեան շարունակականութիւնն ապահովելու նախանձախնդրութեամբ էլ ձեւաւորուեց «Զուարթնոց»-ը: Այն տարիների ընթացքում կարողացաւ իր շուրջ համախմբել համայնքի ճանաչուած մտաւորականներին, արուեստասէրների եւ ազգային գործիչների, որոնք կամատր ու անշահախնդիր ծառայութեամբ իրենց ներդրումն են բերում միութեան աշխատանքներին: Գրական հանդիպումները, գրքերի շնորհանդէսները, դասական համերգներն ու ազգային բնոյթի այլ ձեռնարկները դարձան այն միջոցները, որոնցով «Զուարթնոց»-ը ոչ միայն արժեւորում է մեր ժառանգութիւնը, այլեւ փորձում է այն հասանելի ու հարագատ դարձնել նոր սերնդին: Դոկտ. Սիմոնեանի հետեւողական եւ անձնուէր գործունէութեան շնորհիւ միութիւնը վաղուց արդէն իր ճանաչելի տեղն է հաստատել Արեւմտեան թեմի համայնքային կեանքում:

Այս երկարամեայ գործունէութեան ամենասիրուած դրսեւորումներից է «Երեսանեան գիշերներ» ամենամեայ ձեռնարկը, որի մտայղացումը պատկանում է միութեան երկարամեայ անդամներ, մեծարգոյ Արա եւ Սոնիա Բաբայեաններին: Տարիների ընթացքում այն վերածուել է սպասուած աւանդոյթի՝ մի երեկոյի, որի խորհուրդը շատ աւելի լայն է, քան պարզապէս երաժշտական կամ պարային ծրագիրը: Այն իւրատեսակ հանդիպում է հայրենիքի հետ՝ հազարաւոր մոլոնների հեռաւորութիւնից:

Պատահական չէ նաեւ միջոցառման վայրը: «Երեսանեան գիշերներ»-ն աւանդաբար անցկացւում է Սրբոց Դեւոնդեանց տուֆակերտ Մայր Տաճարի խորհրդաւոր բակում: Երբ երեկոն իջնում է տաճարի կամարներին, հայկական մեղեդին լցնում է շրջակայքը, իսկ ամառային մեղմ զեփիւռը սահում է ծառերի միջով, ներկան մի պահ մոռանում է աշխարհագրական հեռաւորութիւնը: Թւում է՝ նոյն քամին անցել է Երեսանի փողոցներով, իր հետ բերել հայրենի քաղաքի ջերմութիւնն ու կարօտը եւ հասել մինչեւ Գալիֆորնիա: Այդ պահին Երեսանը դադարում է պարզապէս քաղաքի անուն լինելուց եւ վերածնունդ է ապրում մի հարազատ, ջերմ ու անբացատրելիօրէն մօտ:

Այս տարի այդ գեղեցիկ աւանդոյթը շարունակուեց օգոստոսի 13-ին՝ Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի բարձր հովանու ներքոյ: Սրբազան Հօր ներկայութիւնն ու օրհնութիւնը առանձնապատուկ խորհուրդ էին հաղորդում երեկոյին: Իր բազմամեայ առաջնորդութեան ընթացքում Յովնան Սրբազանը, որպէս իր հոտի քաջ ու հոգատար հովիւ, մշտապէս զօրավիգ է եղել այն նախաձեռնութիւններին, որոնք ամրացնում են հայ մարդու կապը Մայր Եկեղեցու, ազգային արմատների եւ հայրենի ժառանգութեան հետ: Նրա հայրական հոգածութեան շնորհիւ Արեւմտեան թեմը դարձել է մի հզօր ընտանիք, որտեղ եկեղեցական կեանքը բնականօրէն միահիւսում է կրթութեանը, արուեստին ու ազգային ծառայութեանը: Հարկ է նշել, որ այս ամէնի խորքում Յովնան Սրբազանի տասնամեակների անձնուէր հոգեւոր ծառայութիւնն է, որի շնորհիւ նա այսօր իրաւամբ վայելում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու առաւել յարգւած ու հեղինակաւոր հոգեւոր առաջնորդներից մէկի բարձր համբաւը:

Երեկոն բացուեց «Զուարթնոց» մշակութային յանձնախմբի առեւտապէս դոկտ. Սիմոն Սիմոնեանի ողջոյնի խօսքով: Ս. Դեւոնդեանց մայր տաճարի հովիւ, արժանաշնորհ Տ. Խաժակ քահանայ Ծախրազեանի օրհնութիւնից յետոյ հանդիսութիւնը շարունակուեց հայկական ժողովրդական պարի, երաժշտութեան եւ տարագային արուեստի գունեղ համադրութեամբ՝ ամբողջացրելով «Երեսանեան գիշերներ»-ի բուն գաղափարը:

Ծրագրի ուշագրաւ հատուածներից էր Նունէ Աւետիսեանի հետաքրքրական ներկայացումը՝ նուիրուած հայկական պարային տարազների պատմու-

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԻՍԻԱԳ ԳՈՒՄՐՈՒՅՄԱՆ

ԱՄՆ Արեւմտեան Թեմի Ծախրթօրեայ Վարժարաններու Հոգեւոր Տեսուչ

թեանը: Տաճարի բակում ցուցադրուած ազգային հանդերձները ներկայացնում էին պատմական Հայաստանի տարբեր նահանգներն ու գաւառները: Դիտելով դրանք՝ առաւել տեսանելի էր դառնում, որ հայկական տարազը երբեք պարզապէս հագուստ չի եղել: Նրա գոյների, զարդանախշերի եւ ձեւերի մէջ կարդացւում են բնակավայրի պատմութիւնը, ժողովրդի կենցաղը, գեղագիտական ընկալումները եւ նոյնիսկ աշխարհայեացքը: Այդ երեկոյ իւրաքանչիւր տարազ կարծես լուռ պատմում էր իր ծննդավայրի մասին՝ յիշեցնելով այն Հայաստանի բազմերանգ պատկերը, որի բազմաթիւ հատուածներ այսօր մեզ հասանելի են յիշողութեան ու մշակութային ժառանգութեան միջոցով:

Տարազների այդ գունագեղ աշխարհը բնական շարունակութիւն ստացաւ պարի մէջ: Վարդան եւ Արմինէ Աղաջանեանների ղեկավարութեամբ «Զուարթնոց» պարախմբի երիտասարդները հանդիսատեսին ներկայացրին հայկական ժողովրդական պարեր՝ իրենց շարժումների մէջ կենդանացնելով այն ոգին, որի մասին պատմում էին ազգային հանդերձները: Ուշագրաւ է, որ պարախմբի տարազներն ու բեմական հանդերձները պատրաստուում են Վարդան Աղաջանեանի ձեռքով: Այսպիսով, բեմում մէկ ամբողջութեան մէջ էին միաւորւել երաժշտութիւնը, պարը, տարազն ու պատմութիւնը: Գեղարուեստական ծրագրի աւարտին երեկոն ստացաւ առաւել յուզիչ ու խորհրդանշական ընթացք: Թեմակալ առաջնորդ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը ներկաներին փոխանցեց իր հայրական պատգամն ու օրհնութիւնը՝ բարձր գնահատելով «Զուարթնոց»-ի եւ նրա նուիրեալ անդամների բազմամեայ ծառայութիւնը: Սրբազան Հայրը օրհնութեան գիր յանձնեց նաեւ պարախմբի ղեկավարութեանը, իսկ երիտասարդ պարողներին նուիրեց փոքրիկ խաչեր՝ յորդորելով դրանք տարիներ անց փոխանցել իրենց առաջնեկներին:

Այդ խօսքերի մէջ ամփոփուած էր երեկոյի խորագոյն խորհուրդը: Այսօրւայ երիտասարդին տրուած փոքրիկ խաչը վաղը պիտի հասնի մէկ այլ սերնդի՝ որպէս հաւատքի, ընտանեկան յիշողութեան եւ ազգային պատկանելութեան նշան: Այդպէս անցեալը չի մնում պատմութեան փակ էջերում, այլ ձեռքից ձեռք է անցնում եւ շարունակում ապրել: Սրբազան Հօր պատգամը հէնց այդ շարունակականութեան գեղեցիկ խորհրդանիշն էր՝ օրհնեալ անցեալից դէպի յուսառատ ու լուսաւոր ապագայ:



Բեմական ծրագրին յաջորդեց երեկոյի մէկ այլ՝ ոչ պակաս հարագատ հատուածը: Հարիւրաւոր ներկաներ բողբոջեցին ազապէի՝ սիրոյ ճաշի սեղանների շուրջ՝ շարունակելով երեկոն ջերմ զրոյցներով ու հանդիպումներով: Եւ այստեղ եւս կենդանանում էր այն հին հայկական սովորոյթը, որի շնորհիւ սեղանը երբեք միայն ճաշելու վայր չի եղել: Այն մարդկանց մերժեցնող տարածք է, որտեղ կիսում են հացը, յիշողութիւնները, ուրախութիւնն ու բարեկամութիւնը: Այսպիսով, բեմում սկսուած տօնը բնականօրէն շարունակուեց մարդկանց միջեւ՝ վերածուելով համայնքային ջերմ հանդիպման:

Ուշ երեկոյեան, երբ ծրագիրն արդէն մօտենում էր աւարտին, Սրբոց Դեւոնդեանց Մայր Տաճարի բակում դեռ հնչում էին հայկական մեղեդիները: Մի քանի ժամ շարունակ այստեղ կողք կողքի էին յայտնուել այն ամէնը, ինչով սերունդներ շարունակ հայրը ճանաչել ու պահպանել է իրեն՝ եկեղեցին ու խաչը, մայրենի խօսքն ու երգը, տարազն ու պարը, միասնական սեղանն ու հայրենիքի կարօտը:

Թերեւս հէնց սա է «Երեսանեան գիշերներ»-ի եւ ընդհանրապէս «Զուարթնոց»-ի տարիների աշխատանքի ամենամեծ արժէքը: Դոկտ. Սիմոն Սիմոնեանի գլխավորած միութիւնը, վայելելով Արեւմտեան թեմի ժրաջան առաջնորդ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի հայրական զօրակցութիւնը, կարողանում է հազարաւոր մոլոնների հեռաւորութեան վրայ ստեղծել մի միջավայր, որտեղ հայրենիքը ոչ միայն յիշում են, այլեւ ապրում:

Եւ այդ երեկոյ Երեսանը հեռու չէր: Այն Սրբոց Դեւոնդեանց Մայր Տաճարի բակում էր՝ հայկական մեղեդու հնչիւնների, երիտասարդների պարի, ազգային տարազների գոյների, Սրբազան Հօր օրհնութեան եւ մարդկանց ջերմ հայեացքների մէջ: Քանի դեռ այդ շունչը փոխանցւում է մէկ սերնդից միւսին, հայրենիքի ճանապարհը երբեք չի կորչի, որովհետեւ այն ապրում է հայ մարդու յիշողութեան, հաւատքի եւ սրտի մէջ:

ՊՈԼՍԱՀԱՅ ԴԴՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ԱՀԱԿԵՐՏՆԵՐՈՒ ԱՊԱԳԱՆ...

(Ծարունակուած 7-րդ էջէն)

Նախարար Եւսուֆ Թէքին հանդիպած էր թրքահայ կրթական համակարգի ներկայացուցիչներուն եւ Պոլսոյ Հայոց Ամեն. Տ. Սահակ Բ. Պատրիարքին: Հանդիպման ժամանակ քննարկուած էին կրօնագիտութեան եւ հայերէնի դաստանդման նոր ծրագիրներու հարցերը, եւ համայնքային շրջանակները այդ հանդիպումն որոշակի յոյսեր ստացած էին:

Այս բոլորը հաշուի առնելով անդին Գոչումեան կը հաստատէ, «հիր աշակերտներ»ու հարցը նոր եւ մեծ հարցական մը ստեղծած է համայնքին մէջ:

Բագրատ Էսրուգեան.

«Հայը իրաւունք ունի հայկական վարժարան յաճախելու»

«Ոչ մէկ գաղափար ունիմ, ինչպէս ես, շատեր ալ գաղափար մը չունին, թէ ինչու այս պահուն այսպիսի կարգադրութիւն մը ըրին»,– կ'ըսէ Բագրատ Էսրուգեան՝ անդրադառնալով վերջին զարգացումներուն:

Ան կը յիշեցնէ, որ շատ կարճ ժամանակ առաջ Թուրքիոյ Կրթութեան նախարարը այցելած էր Պատրիարքարան եւ հանդիպած կրթական պատասխանատուներուն, սակայն այդ հանդիպման ընթացքին նման հարց մը չէր բարձրացուցած:

Այդ այցելութենէն օրեր անց, սակայն, քննիչներ այցելած են հայկական վարժարաններ եւ տեղեկացուցած, թէ Հայաստանցի՝ այն աշակերտները, որոնք «հիր»ի կարգավիճակով կ'ուսանին համայնքային դպրոցներու մէջ, պէտք է այսուհետեւ պետական դպրոցներ յաճախեն:

«Բայց ինչո՞ւ համար է այս, ի՞նչ պատճառաբանութիւն կայ՝ յստակ չէ: Ոչ մէկ բացատրութիւն տրուեցաւ»,– կը շեշտէ ան:

«Այօս»ի հայկական էջերու խմբագիր՝ Էսրուգեան կը կարծէ, որ այստեղ հիմնական խնդիրը Հայաստանի քաղաքացիներու երեխաներուն կրթական իրաւունքն է:

«Եթէ հայու մասին է խօսքը, հոգ չէ թէ քաղաքացի է թէ ոչ, ան իրաւունք ունի հայկական վարժարան յաճախելու»,– կ'ըսէ ան: Ան նաեւ կը յիշեցնէ, որ Հայաստանցի աշակերտներու համար արդէն իսկ սահմանափակումներ գոյութիւն ունէին: Անոնք համայնքային վարժարանէն պաշտօնական վկայական չէին ստանար եւ չէին կրնար այդ փաստաթուղթով Թուրքիոյ մէջ համալսարանի քննութեան մասնակցիլ:

Էսրուգեան կը ճշէ նաեւ, որ Պոլսոյ Կէտիկփաշա թաղամասի «Հրանդ Տինք» վարժարանը, որ պաշտօնական օրինական կարգավիճակ չունի, սակայն կը շարունակէ գործել, եւ պետութիւնը այդ իրողութենէն տեղեակ է:

Ան չի կարծեր, որ ներկայ զարգացումներէն անմիջապէս ետք այդ դպրոցի... կարգը պիտի գայ: Սակայն, իր խօսքով, Թուրքիոյ կրթական հարցերուն մէջ կայ անելի լայն քաղաքական համատեքստ մը, որուն մէջ համայնքը միշտ չէ, որ ամբողջովին ազատ գործելու հնարաւորութիւն ունի: Համայնքային արձագանգին մասին Էսրուգեան կը ճշէ, որ առայժմ հրապարակային ուժեղ հակազդեցութիւն չէ եղած: Անոր համաձայն՝ համայնքային որոշ շրջանակներ չեն ուզեր կառավարութեան հետ հակադրութեան մէջ մտնել: Ըստ Էսրուգեանի, համայնքին մէջ շուկներ կան, որ յառաջիկայ օրերուն Պոլսոյ Պատրիարքը այս նիւթով այցելութիւն պիտի տայ Թուրքիոյ կրթութեան նախարարութիւն եւ պատասխանատուներուն հետ քննարկէ վերջին զարգացումները, որմէ ետք միայն ակնկալելի է, որ Պատրիարքարանը կամ նոյնիսկ Պատրիարք Սրբազան Հայրը լուսաբանութիւններ կատարէ այս նիւթին վերաբերեալ:

«Ուսման իրաւունքը համաշխարհային սկզբունքներով ճշդուած իրաւունք մըն է»,– կը շեշտէ խօսակիցս, ճշելով, որ միջազգային համաձայնութիւններու եւ սկզբունքներու հիման վրայ աշակերտը պէտք չէ գրկուի կրթութենէ իր իրաւական կարգավիճակին պատճառով: Ըստ Էսրուգեանի՝ այս հարցին շուրջ Հայաստանն ալ, Թուրքիոյ հայ համայնքն ալ իրաւունք ունին հարցընելու, թէ ինչո՞ւ նախապէս գործնականօրէն ճանչցուած հնարաւորութիւն մը այս պահուն վերցունցաւ:

Հայաստանցի ընտանիքներուն համար այս զարգացումը՝ վատ անակնկալ է

Էսրուգեան կը դիտարկէ՝ «Իրենց զաւակը միգրուցէ քանի մը տարի է արդէն կը յաճախէր որոշ դպրոց մը, եւ իրենք ալ կը յոսալին, որ այդ երեխան այդ դպրոցը պիտի աւարտէ: Եւ հիմա իրենց կ'ըսեն, թէ պէտք է երթան պետական վարժարան: Անշուշտ ասիկա անակնկալ մըն է, որ բոլորին համար ցնցիչ պիտի ըլլայ»:

Հետեւաբար այս պահուն, ուրեմն, հարցը կը մնայ բաց: Ոչ միայն այն պատճառով, որ անորոշ է «հիր աշակերտ»ներու ապագան, այլ նաեւ որովհետեւ այս խնդիրը կը դալչի անելի լայն հարցի մը՝ ո՞վ եւ ի՞նչ պայմաններով իրաւունք ունի հայկական դպրոցի մը մէջ կրթութիւն ստանալու:

Եւ այդ հարցին տրուելիք պատասխանը պիտի ըլլայ կարեւոր՝ ոչ միայն այսօրուան աշակերտներուն, այլ նաեւ Պոլսահայ համայնքի վաղուան դպրոցին համար:

«Հիր աշակերտ»էն անդին՝ հայ երեխային հայկական դպրոց յաճախելու իրաւունքը

Այսպիսով, Պոլսահայ համայնքին առջեւ դրուած հարցը միայն «հիր աշակերտներ»ու կարգավիճակի հարց մը չէ: Ան անելի խորունկ խնդիր մը կը բացայայտէ՝ ո՞վ իրաւունք ունի հայկական դպրոց յաճախելու եւ ո՞վ կ'որոշէ այդ իրաւունքին սահմանները:

Այս պահուն վերջնական արգելքի մասին խօսիլը վաղաժամ է, սակայն ստեղծուած անորոշութիւնը ինքնին մտահոգիչ է: Որովհետեւ կրթութեան հարցը այստեղ միայն դպրոցական խնդիր չէ. ան ուղղակիօրէն կը վերաբերի հայ ընտանիքներու ընտրութեան, երեխաներու ապագային եւ Պոլսահայ համայնքի կրթական ու ազգային շարունակականութեան:

Պոլսոյ մէջ հիմա բոլորին աչքերը ուղղուած են դէպի Պատրիարքարան, անկէ անդին ալ դէպի համայնքային կառոյցներ ու մանաւանդ Թուրքիոյ Կրթութեան նախարարութեան յառաջիկայ քայլերուն: Այս հարցին լուծումը պիտի ցոյց տայ, թէ «հիր աշակերտ»ը ժամանակաւոր բացառութիւն մըն էր, թէ՞ հայկական դպրոցին դուռը հայ երեխային համար կը շարունակէ բաց մնալ՝ անկախ անոր քաղաքացիութենէն:

Երեսն

ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ԳԱՋԱՅԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 160-ԱՄԵԱԿԸ

(Ծարունակուած 8-րդ էջէն)

Կրօնաւորութիւններու ուխտը տարածուն երեւոյթ մը չէ եղած Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ծոցին մէջ, հակառակ որ պատմական աղբիւրներ մերթ ընդ մերթ ակնարկած են հայ սարկաւագուիներու կամ միանձնուիներու գոյութեան, յատկապէս ԺԲ. դարէն սկսեալ: Յստակ է որ Հայ Եկեղեցւոյ նուիրապետական դրուածքին խորք չէ կանանց սարկաւագութեան աստիճան շնորհելու աւանդութիւնը, ինչպէս լայնօրէն բացատրած է դոկտ. Աբել քինյ. Մանուկեան իր «**Հայ եկեղեցւոյ սարկաւագուիները**» նորատիպ գիրքին մէջ (Պէյ-րութ, 2022, մեկենասութիւն՝ Միեր-Նինա Պապեան ամուլի): Ան համոզում կը յայտնէ որ այդ աւանդութեան «պահպանումն ու զարգացումը իւրաքանչիւր հայ հաւատացեալի, բայց մանաւանդ մեր եկեղեցւոյ եպիսկոպոսական դասի սեպուի պարտականութիւններէն մէկը պէտք է ըլլայ»: Ուոյնիսկ նկատել կու տայ որ եթէ կանայք նախագահ, վարչապետ ու քաղաքական գործիչ կը դառնան իրենց ապրած երկիրներուն մէջ, եթէ տիեզերագնաց կ'ըլլան ու անջրպետը կը նուաճեն, հապա ինչո՞ւ արտօնուած չեն «**եկեղեցիին մէջ ընդամենը քանի մը քայլ առնելով՝ խորան բարձրանալ, զԱստուած փառաբանել եւ անոր սուրբ եւ փրկարար ներկայութեան հաղորդակից դարձնել հաւատացեալները**»...:

Աբել քահանայ ոչ-հեռաւոր անցեալէն տուած է երկու ուշագրաւ օրինակներ. Ս. Կատարինէի մենաստան-վանքն ու կուսանոցը **Նոր Ջուղայի մէջ** (Պարսկաստան) եւ Ս. Ստեփանոս կուսանաց վանքը **Թիֆլիսի մէջ**: Ասոնցմէ առաջինը, որ կոչուած է նաեւ Ս. Կատարինեան անապատ, կեանքի կոչուելով ԺԷ. դարուն՝ իր միաբանութիւններուն թիւը կրցեր է բարձրացնել մինչեւ 33-ի: Այս թիւը յաջորդ տասնամեակներուն հետզհետէ նուազելով՝ իվերջոյ չքացեր է լրիւ: Միւսը՝ Թիֆլիսինը, գոյութեան կոչուած է առաջինէն դար մը ետք (ԺԸ. դարու առաջին քառորդին), **Բեհրութեանց** ազնուազարմ ընտանիքին հովանաւորութեամբ: Ըստ երեւոյթին գոյատեւեր է մինչեւ խորհրդային վարչակարգի հաստատումը Վրաստանի մէջ (կուսանոցին պատմութիւնը գրի առնուած է Խորէն քինյ. Խուցեանի կողմէ ու անջատ գիրքով տպուած Թիֆլիս, 1914-ին): Վաւերական վկայութիւն կայ, թէ 1895-ին Թիֆլիսի Ս. Ստեփանոս կուսաստանը ունէր 18 միաբանութի (12 սարկաւագուի եւ 6 դպրուհի), գլխաւորութեամբ մայրապետ Կնեագուի Կատարինէ Արդուքեան Երկայնաբազուկի: Մինչեւ Ա. Աշխարհամարտի շրջանը՝ միաբանութիւններուն թիւը վերիվարոյ մնացեր էր անփոփոխ: Իդէպ, Թիֆլիսի այս նոյն Ս. Ստեփանոս գեղաշէն եկեղեցին 80-ական թուականներուն հայոց ձեռքէն խլուելով վրացականացուած է...:

Ըստ Աբել քահանայի հայթայթած տուեալներուն, երկու հայ սարկաւագուիներու ձեռնադրութիւն կատարուած է Արժամթիւնի Թեմին մէջ՝ 2000-ականներու սկիզբը, հատ մըն ալ Թեհրանի Թեմին մէջ, 2017-ին: Ասոնք հազուադէպ երեւոյթներ են, որոնք զայրացուցած են յատկապէս Էջմիածնայ Մայր Աթոռը...:

Մեր օրերուն, կարելի է հարց տալ անշուշտ, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս Հայ Կաթողիկէ յարանուանութիւնը 1847-էն իվեր յաջողապէս կը պահէ **Անարատ Յորութեան Հայ Բոյրերու Միաբանութիւնը** (կեդրոնը՝ Հռոմ), որ դպրոցական ցանց մըն ալ ունի զանազան գաղութներու մէջ, մինչ Հայց. Առաքելական մայր եկեղեցին չի յաջողիր ստեղծել, պահել եւ ուռճացնել նմանօրինակ կառոյց մը: Մեր նուիրապետական աթոռներէն Էջմիածինն ու Երուսաղէմը չունին կրօնաւորութիւններ, իսկ Անթիլիասի 1990-ի փորձը (Գայիանեան Միաբանութիւն, Ճիպէլլի «Թշնոց բոյն»-ին մէջ) մնաց նկուն ու չպտղաբերեց: Հետեւաբար, Պոլսոյ Գալֆայեան Ուխտը շարունակեց մնալ իր տեսակին մէջ եզակի հիմնարկութիւն մը բովանդակ հայաշխարհի տարածքին:

Բայց հո՞ն ալ տերեւաթափը իվերջոյ մերկացուց ծառը...: Միաբանութեան պեզարդ ու տարեց քոյրերը մի առ մի հրաժեշտ առին այս աշխարհէն ու հրապարակը թողուցին ամայի: 80-ականներուն Պոլսոյ մէջ մնացեր էր Գալֆայեանի միակ անդամութիւն մը՝ քոյր Հռիփսիմէ Սասունեանը, որ սարկաւագուիի ձեռնադրուած էր Շնորհք պատրիարքի ձեռամբ: Ան եւս վախճանեցաւ 13 Մարտ 2007-ին, 79 տարեկանին:

Կը կարծուէր, որ միաբանութիւնը պիտի փչէր իր վերջին շունչը...: Բայց սիւս, ճիշդ այդ օրերուն (7 Ապրիլ 2007), երիտասարդուհի մը՝ **Գայիանէ Տուլքաթիքեան**, միացաւ ուխտին, տարաբախտ Մեսրոպ Բ. պատրիարքի օրով: Ան ալ շարունակեց առանձին կրել Գալֆայեանի խորհրդանշական անունն ու բարոյական պատասխանատուութիւնը, շուրջ 20 տարի, մինչեւ որ ընթացիկ տարուան սկիզբը (28 Յունուար 2026), Իսթանպուլի ասիական ափի Գուգլկունճուք թաղամասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պոլսահայ դպրուհի Սօսի Թերգեան միանձնուիի քօղ ստացաւ Սահակ պատրիարքի կողմէ, վերակոչուեցաւ **քոյր Հռիփսիմէ** ու Գալֆայեան դարաւոր միաբանութեան անդամակցելով՝ դարձաւ անոր երկու կրօնաւորութիւններէն միւն...:

Այսպիսով, Գալֆայեան Տան 160-ամեակը նշանաւորուեցաւ գեղեցիկ անակնկալով մը:

Խելացնոր, ցոփ ու շուայտ եւ հոգեկան արժէքներէ մերկացած ներկայ ընկերութեան ու միջավայրին մէջ Գալֆայեան Ուխտը կրնա՞յ տակաւին նոր ընձիւղներ արձակել: Պիտի գտնուի՞ն անճեր, որոնք յօժարակամ անսանկրօնաւորական ուխտի մայր սկզբունքներուն՝ **հնազանդութեան, աղքատութեան, ժուժկալութեան եւ ծառայութեան**. ապագա՞ն պիտի պատասխանէ:

Հալէպ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻՎԻԿ

Շաբաթաթերթը

այսուհետեւ կարելի է կարդալ

www.baikarweekly.com

կայքէջով

ԵՍ ՈՒ... ԵՍՍ

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ



Քեզ փնտռեցի օրերուս մէջ,
ճամբաներուն իմ կեանքի,
պահերուն մէջ երազանքիս պարտասած...
Եւ ճախրեցայ, ճախրեցայ...
Թափառեցայ անսահմանի,
անորոշի
խուլ, մթնամած եզրերու
քնայքին լուռ յանձնուած...
Որոնեցի անսահմանը հեզգեղով...
Բայց... աւաղ...
Ես ինքզինքս չգտայ...
Եւ այսպէս մենք՝ դու՛ն ու ես՝
– Ես... ու... Ես –
Մենք ճամբորդներ միածին...
փնտռեցինք զիրար երկար մթութեան մէջ այս կեանքին...
Ձիրար աւաղ չգտանք...
Հիմա կարծես
թաքնուած տեղ մը մօին
դուն ալ ինձի պէս շփոթ
կը սպասես որ գտնես զիս...
Երկու որբեր ենք, աւաղ,
թէ՛ քով-քովի, թէ՛ հեռու,
անորոշի ճիրաններուն յանձնուած
կը թափառինք մանուածապատ
մթութեան մէջ անյոյսի...
Մոլորակներ մոլորուած
տիեզերքին մէջ էիս
կը փնտռենք մենք զիրար
գոյոյթիս* խենթ ծիրին մէջ...
Երազանքի ալիքներուն յանձնուած
նոր երազներ կ'որոնենք...
Եթէ...
կամ...
երբ հանդիպինք...
ինչե՛ր ունինք պատմելու...
երազանքներ լուռ բեկուած...
անյոյս յոյսեր...
վերթետումներ...
լո՛ւռ ցաւեր...
նորաբողբոջ լո՛ւռ տենչեր...
Բայց...
աւաղ...
Անյոյս որբեր ենք թափառ
պիտ' չգտնենք մենք զիրար ...


Գրիգորեան տոմար- Օր՝ 1, Ամիս՝ Դեկտեմբեր, Ամ՝ 2025
Հայկեան տոմար- Օր՝ Ծմակ, Ամիս՝ Տրէ, Յամի՝ ՏՇԺԷ (4517)
*Աստղանշուած բառը՝ «Մարգարեան Բառակազմութեան
Համակարգ»էն է, բառարաններուն մէջ մի փնտռէք:



KOHAR
GALLERY

MASTERPIECES OF
ARMENIAN MUSIC

ARRANGED FOR GUITAR BY
MEGERDICH MIKAYELIAN



KOHAR

Մկրտիչ Միքայէլեանին երաժշտական գիրքին զինեւօնը տեղի պիտի ունենայ՝
ԳՈՀԱՐ Ֆուգասարահէն ներս, Չորեքշաբթի, 26 Օգոստոս 2026-ին
Երեկոյեան ժամը 7:00-ին

Հասցէ: 243 Արմենիա Փողոց-Մար Միխայէլ
Պանք Պէրուքի շէնք, Առաջին Յարկ

Հրաւեր
ԳՈՀԱՐ Գրադարան

Tekeyan Cultural Association Greater New York
in collaboration with the Armenian Radio Hour
of New Jersey presents

ROMANTIC SOUL:
MASTERPIECES FOR
PIANO TRIO

Featuring works by
Khachaturian, Mendelssohn,
Naregatsi, Babajanian
and others



TANYA
GABRIELIAN
piano



ANI
KALAYJIAN
cello



ERIC
SILBERGER
violin

Sunday, September 27, 2026
4PM

West Side Presbyterian Church
6 S Monroe St, Ridgewood, NJ 07450

Tickets \$75, \$50, \$40



2026-2027
ADMISSION
OPEN

FIRST DAY

St. Thomas Armenian Church's
Kirikian
ARMENIAN SATURDAY SCHOOL

SATURDAY, SEPTEMBER 12TH, 9:00 AM

School Hours 9:00 AM - 1:15 PM
Toddlers, Nursery to 7th Grade, Ages 2 ½ - 12

REGISTER ONLINE

Բարի՛ Գալուստ



ENROLL NOW

NEW: SPECIAL ½ HOUR ARMENIAN CONVERSATION
CLASS WITH SPECIALIZED TEACHER

ONLINE REGISTRATION
<https://form.jotform.com/212505583429154>

ONLINE PAYMENT
venmo@kirikianarmenianschool
(last 4 of cell - 3203)

CONTACTS
Ani@lacapan.com or
Talar@sarafian1.com

SOCIAL MEDIA
<https://www.facebook/kirikianarmenianschool>

www.armenianschoolstthomas.com

CURRICULUM
Armenian Reading, Writing, Conversation, Literature, History, Geography for Upper Grades, Religion, Dance, Badarak Hymns, Folk Songs, Arts & Crafts, Parties & Talent Shows

PROGRAMS
Special Toddler Program, Armenian Conversation ½ Hour Each Saturday, Chess

SPECIAL EVENTS
Armenia's Independence, Armenian Genocide, Easter Communion & Breakfast, Armenian Christmas, Parent/Teacher Party & Fair, Hantes & Graduation

FACILITIES
Classrooms, Computer Lab, Library, Church Sanctuary, Playground, Stage/Halls

174 Essex Drive | Corner of 9W & E. Clinton Avenue | Tenafly, NJ 07670 | (201) 567-5446

ԲԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Ճաբաթաթերթ

www.baikarweekly.com